



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

576.8

4-25

EROS JUL 85

11 55

Urgent

26 JUL 2013

13531

576.8
U-25

29 JUL 2010

Բ. Գ. ՍԱՐԳՈՒԵԱՆՑ

~~530~~
~~107-00~~

ՕԳՏԱԿԱՐ ԹՎ ՎՆԱՍԱԿԱՐ

ՄԻԿՐՈԲԱՅԵՐ

1002/
22
696

ԽՈՐ ԽՈՐ

ՕԴԻ ՓՈՇԻՆ



(Արարատ)



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան «ՀԵՐՄԻՍ» Միք. փողոց 81
(28)

Ա Խ Ա Զ Ա Բ Ա Ն

Վերնագրում դրուած այս երկու աշխատութիւնները առաջին անգամ երևացել են «Մուլճ» ամսագրում 1898 և 1901 թուականներին:

«Օգտակար եւ վնասակար միկրոբները» յայտնի փոփոխութիւններով եւ կրծասումներով թարգմանուած են ֆրանսերէնից Microbes bienfaisants et microbes malfaisants աշխատութիւնից:

Մենք օգտակար համարեցինք երկու աշխատութիւնները միասին հրատարակել, որովհետեւ մէկը միասին լրացնում է:

Թ. Գ. Սարգսեանց.

Բագու. 1904 թ. 15 սպրինի

ՕԳՏԱԿԱՐ և ՎՆՍՍԱԿԱՐ ՄԻԿՐՈԲՆԵՐ

Ա.

ԽՄՈՐՈՒՄԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Պատմական.—Պաստեօրի նախորդները.—Պաստեօրը եւ խմորումը.—Սպիրտի խմորումը:

«Ով կարողանայ խորը գննել խմորիչների և խմորումների բնութիւնը, նա անկասկած ամենաընդունակը կը լինի զանազան ախտային երեւոյթների, ինչպէս տաքութեան, նոյնպէս և ուրիշ հիւանդութիւնների, իսկական բացատրութիւնը տալու։ Այդ երևոյթները երբէք լաւ չեն հասկացուի, մինչև որ չը բացատրուեն հիմնապէս խմորման պատճառները»։

Այս տողերը պատկանում են XVII դարու բնագէտ անգլիացի Ռոբերտ Բուալին։ Մենք յետոյ կը տեսնենք որ այդ մարգարէական տողեր էին, և ինչպէս և, Պաստեօրի անմահ գործերը համապատասխան եղան այդ մարգարէութեան։

Այս վերջին զիտնականը ցոյց տուեց իւր փորձերով, որ խմորման երևոյթը իսկապէս մի անխղելի կապ ունի մանրադիտական (միկրոսկոպային) կենդանի էակների աճման հետ և որ ա-

ռանց այդ էակների ներկայութեան, որոնք կոչվում են խմբիչներ (ֆերմենտներ), երբէք խմորումը տեղի չի ունենում:

Անցեալում առաջարկուել են թէօրիաներ, օրինակ խաղողի խմորում բացատրելու համար, բայց բոլոր մեկնութիւնները վարակուած էին մոլորութիւններով:

Ալիսիմիկների (ոսկեփոխների) կարծիքով գիշու եփուիլը և կաւիճի ֆշֆշալը, երբ վերջինիս վրայ զցում ես մի կաթիլ թթու, համանման երեսիներ էին:


Լաւուազիէն (1743—1794), ֆրանսիացի քիմիկոսը, առաջինը ապացուցեց որ շաքարը խմորուելով բաժանւում է ալկոհոլի և ածխաթթուի և թէ այդ քակման արդիւնքների՝ ալկոհոլի և ածխաթթուի քաշերը, գումարած միասին, ներկայացնում են իսկ և իսկ շաքարի քաշը խմորումից առաջ:

1860 թւականին, Պաստեօրը, որ այդ ժամանակ կլլլի գիտութեանց ճեմարանի ուսուցչապետ էր, պնդում էր, որ Լաւուազիէնի քիմիապէս բացարած երեսոյթը կենդանական բնութիւն ունի և իւր գոյութեամբ պարսական է խմորի ներգործական մասնակցութեան, հակառակ լիբիթի յայսնած մաքերին, որը վերագրում էր խմորին զուտ քիմիական ներգործութիւն:

Խմորիչների մէջ ամենալաւ ուսումնասիրուածն է գարեջրի խմորիչը (նկ. 1.), որ մնում է զըտիչ թղթի երեսին, երբ խմորումով առաջացած

գարեջրի քաղցուն (շիրա) քամում էք նորանով:

Դա մի սպիտակագոյն զանգուած է, թթուաշև անախորժ հոտով: Մանրադիտակի տակ մաքուր ջրի մէջ (անհրաժեշտ է որ այդ ջուրը եր-



Նկ. 1.—Գարեջրի խմորումը հանդարտ և աճող դրութեան մէջ:

բէք շաքարեղէն չը պարունակի իւր մէջ), նա նմանում է սերմերի, գնդակի ձևով, քիչ թէ շատ անկանոն, մեծութեամբ 8-ից մինչև 9 հազարական միլլիմետր, լցուած մանրիկ հատիկներով. այդ սերմերը կամ հատ-հատ են կամ երկուսը միասին կցուած:

Քիմիապէս խմորը կազմուած է հետևեալ կերպով:

Ածխածին $48^0/0$ մինչև $49^0/0$

Զրածին $6^0/0$ — $6,5^0/0$

Բորակածին $9^0/0$ — $12^0/0$

Թթուածին $31^0/0$ — $36^0/0$

Մոխիր $2^0/0$ — $4^0/0$

Այդ մարմինները չեն փոխում իրանց ձևը, մինչև որ զտնւում են մաքուր ջրի մէջ. նոքա ապրում են միասին զատ-զատ, պահպանելով միայն քնած կեանք: Բայց երբ ջրի հետ խառնում

Են մի պատշաճաւոր հիւթ, որ պարունակում է իւր մէջ պաղային շաքար, և երբ այդ հեղուկի տաքութիւնը համառում է 20° (Ցելսիուսի ջերմաչափ) այդ մարմինները արթնամառ են և խմորը սկսում է աճել:

Ամեն սի սերմ դառնում է կամսոնաւոր ձուածեւ. յետոյ նորա վերայ սկսում է բուանել մի փոքրիկ հատիկ, որը արագ մեծանալով և դառնալով բոլորովին նման այն սերմին, որի վերայ նստել է, բաժաննում է նրանից և սկըսում է ապրել արդէն առաջինի նման. Միւս հատիկները կարող են աճել թէ առաջի սերմի վերայ և թէ երկրորդ, նոյն իսկ իրանց բողբոջման ընթացքում: Այն ժամանակը, երբ մայրեջիջը արտադրում է աղջիկ-բջիջ, առաջինի մէջ գոյանում է դատարկութիւն: Այն նիւթը, որը անհետանում է, բողբոջների սնունդի համար է գործադրում, եթէ միջավայրի պայմաններին նպաստաւոր են¹⁾: Մի բջիջը կարող է արտադրել մի ժամում 4—5 ուրիշը: Այդ գործողութեան ժամանակ հեղուկի միջից արձակուում է ածխաթթու, և շաքարը փոխւում է ալկոհոլի:

Մենք տեսանք որ ալկոհոլի (գինու, գարե-

¹⁾ Պաստեօրը պատրաստեց մի տեսակ արուեստական հեղուկ, որը շատ նպաստաւոր է խմորի աճման համար: Ահա նորա բաղադրութիւնը:

Զտած ջուրը (Aqua destillata).	100դրամ.
Վանաշաքար (sucré Candi).	10
Խմորի մոխիր	1
Աւակի ածխաթթու (carbonate d'ammoniaque)	1

ջրի) եռման մայրիսմորը մի կենդանի էակ է, մի բոյս է, ու ունի ամենահասարակ կազմ, մի շատ անկատար սունկ է. և եթէ մենք նրան շըբնակեցնենք խմորուող հեղուկի մէջ, այլ դնենք մի համապատասխան հողի մէջ, նա այս յատուկ պայմանների մէջ չի կարող այլ ևս բողբոջել այնպէս ինչպէս մենք նոր տեսանք մի ինչ վերեւ, այլչ կը բողբոջի այնպէս ինչպէս բողոր միւս սունկերը:

Դառնանք սակայն խմորի բողբոջման խմորուող հեղուկի մէջ: Խմորը մի կենդանի էակ է. ուրեմն, ինչպէս բոլոր կենդանիները, շնչում է. և շնչառութեան համար նա պիտի կլանի թթուածին: Քաղցրացած հեղուկի մէջ գտնուող խմորը փոխի է առնում թթուածինը շաքարից. այդպիսով շաքարի քիմիական տարրական կազմը կերպարարանափոխուում է և խմորի շաքարից թթուածին առնելու հետևանքը լինում է այն, որ շաքարը փոխուում է ալկոհոլի:

Բայց եթէ խմորը և խմորիչը իրանց աճման պատճառով առաջացնում են խմորումն, չպէտք է կարծել որ նոքա զանազանուում են միւս բուսական կամ կենդանական բջիջներից. օրինակ, նոցանից, որոնք կազմում են հիւսք (tissus, տքան):

Բոլոր բջիջները ապքում են միակերպ:

Ահա ինչպէս Պարփղի Գիտութեանց ձեմախործ ուսուցչապետ Շիւտցենբերգեր երկու հանձարեղ փորձով, որոնցից մէկը ստուգում է միւր-

սին, ապացուցեց որ խմորի մասնիկները գործում են նոյնպէս, ինչպէս կենդանու հիւսքը կազմող մասնիկները:

Առաջին փորձ.—Մ. Շիտցենբերգերը անցկացրեց շնչերակի արիւնը (le sang artériel, артериальная кровь) խողովակի միջով, որը չափաւոր աստիճանի տաքացրած և միջից ծածկած էր խմորով: Արիւնը դուրս եկաւ խողովակից երակային արեան (veineux, венозный) դրութեան մէջ: Հարուստ թթուածինով մասնելիս, նա, դուրս գալիս, փոխարէնը բեռնաւորուած էր ածխաթթուով:

Երկրորդ փորձ.—Միևնոյն գիտնականը անցկացրեց շնչերակի արիւնը մի ուրիշ խողովակի սիջով, որը ամեն կողմից նման էր առաջի փորձում գործադրած խողովակին, այն տարրերութեամբ միայն, որ միջից չէր ծածկուած խմորով: Շնչերակի արիւնը դուրս եկաւ խողովակից անփոխ, ինչպէս մտել էր:

Առաջին փորձում ուրեմն խմորն էր, որ խլելէր շնչերակի արիւնից թթուածինը, իսկ և իսկ այնպէս ինչպէս անում է անասնի կենդանի հիւսքը:

Բուսական հիւսքի բջիջները վարւում են նոյնպէս ինչպէս անասնականինը:

Ճականդեղի (la betterave) արմատի մէջ ամբարած շաքարը մնունդ է հասյնում բոյսի բոլոր մասերին, ճիւղերին, տերեներին և այյն: Բայց որպէս զի այդ բոլոր մասերը կարողանան աճել, անհրաժեշտ է որ թթուածինը բջի նոցա մէջ: Եւ անա տերեները ծծում են այդ անհրաժեշտ գա-

զը և միւս կողմից արտադրում են ածխաթթուն, որը բոյսի մէջ կատարուող քիմիական փոփոխութեան արգասիքն է:

Եթէ ճականդեղի վերի մասերը, թթուածնի մթնոլորդի փոխարէն, պահուած լինեն ածխաթթուի մէջ, այն ժամանակ կը տեմնէք որ նրա աճումը կանգ առաւ, ստեղը չի մեծանում, տերեները դադարեցին բումնել: Այն ժամանակ շաքարը չի գտնի բոյսի խորին մասերում անհրաժեշտ թթուածին իւր խմորման համար և արմատի մէջ նա կը փոփուի ալկոհոլի:

Ուրեմն ճականդեղի արմատի հիւսքը կազմող բջիջները անում են նոյնը ինչ որ գարեջրային խմորի առանձնացած բջիջները:

Իրանց բնական դրութեամբ վերջիններս գտնուում են պտուղների երեսին, մից կաշւով բաժանուած, օրինակ սալորը, այն աղոտ փոշին, որով ծածկուած էնա, պարունակում է իւր մէջ գարեջրային խմորի բջիջներ: Մինչև որ պտուղը կը համնի, նոքա են պտուղի երեսին, ծածուկ պահպանելով իրանց կեանքը, ինչպէս մենք նկարագրեցինք նոցա մաքուր ջրի մէջ: Բայց ահա պտուղը լցուում է քաղցր ջրով, նորա կաշին ձրդւում է, բարակում և, վերջապէս, ճեղքուում: շաքարը դուրս ծորում և պատահում է խմորիչ բջիջներին, որոնք գտնուում են ճեղքի մօտ: Խմորը սկսում է բողբջել շաքարի հաշւով, և վերջինս կերպարանափոխուում է ալկոհոլի:

Արգեծք դուք չէք նկատել զանազանութիւն

հասած և չճեղքած պտուղի մէջ և հասած ու ճեղքածի մէջ։ Առաջինը ջրալի և համեղ է. նա քաղցր և ընտիր համ ունի. Իսկ պայթած պտուղը փոքրիշատէ լակ է, նրա ծորող հիւթը կծու համ ունի և նրա բաց մսից գինու համ է տալիս։ Այս փոփոխութիւնները երկու պտուղի մասի յատկութիւնների մէջ ծագել են ալկոհոլային խմորան պատճառով։ Իսկ վերջինս առաջ եկաւ նորանից որ խմորի բջիջները հնարաւորութիւն ունեցան կպչել պտուղի շաքարին։

Յայտնի են զանազան տեսակի խմորիչներ։

Այն որ շատ յաճախ գտնուում է պտուղների երեսին կոչում է խմորիչ-ապիկուլէ (carpozuma apiculatum)։ Նոքանման են կիտրոնի սերսի, այսինքն ձուածեկ են և իրանց ծայրերին ունին փոքրիկ պտուկներ։ Եթե նոքա սկսում են աճել, նոցա ծայրերին բուսնում են փոքրիկ բողբոջներ, մինչդեռ շատ սակաւ է պատճառում որ գարեջրային խմորիչի բողբոջումը սկսի նրա սերմերի բեեներից։

Գինու սովորական ալկոհոլային խմորիչ, խմորիչ-էլիպսոփիդ (Saccharomyces eslypsoidus de Rees), շատ նման է գարեջրային խմորին։

Խմոր-միկոսերմը (Saccharomyces mycaderma), որը շատ մեծ քանակութեամբ գտնուում է տկար գինու մէջ, կազմուած է երկար և իրանց մեծ առանցքի երկարութեամբ փոքր ինչ ծռուած սերմերից։

Ալիւրի խմորը (Saccharomyces minor)

կազմուած է կոլոր սերմերից, աւելի փոքր քանի վերջիններս։ Նոքա բազմանում են գարեջրի խմորի նման։

Մեր նախագծած շրջանի մէջ չէ մտնում խմորիչների համեմատական ուսումնասիրութիւնը. մասնաւորապէս, խաղողի հիւթի գինու վերափոխութիւլ խմորման շնորհիւ, ինչպէս և ալիւրի՝ հաց գառնալը։ Մենք միայն տալիս ենք այստեղ խմորիչների ընդհանուր ուսումնասիրութիւնը։ Ուրեմն մենք կը բաւականանք նրանով, որ մինչ հիմայ նկարագրածին կ'աւելացնենք յետագայ հիմնական բաները։

Հստ Պաստեօրի 105 գրամ խաղողի շաքարը խմորուելով արտադրում է.

Ալկոհոլ	51
Ածխաթթու	49
Գլիցերին	3
Սաթային թթու	1
Խմորի իւրացրած նիւթեր .	1

105

109 գրամ եղեգնային շաքարը ունի միևնուն արդիւնքը, ինչ որ 105 գրամ խաղողի շաքարը։ Իւր աճման համար խմորը, ուրիշ կենդանի էակների նման, արտաքին աշխարհից պիտի ստանայ այն քիմիական տարրերը, որոնցից նա կազմուած է, այսինքն՝ իբրև հիմնական տարրեր նա պիտի ստանայ ածխածին, թթուածին, ջրածին և բորակածին։ Բայց շաքարը բաղկացած է միայն

առաջի երեք տարրերից, որոնց խմորը իւրացնում է. ապա որտեղից է նա ստանում բորակածինը:

Պաստեօրը փորձեց թողնել որ խմորը բողբոշուի լուծուած վանաշաքարի մէջ, որի վերայ աւելացրել էր աւշակի աղ (tartiate d'ammoniaque) և նկատեց որ վերջինս անհետացաւ բողբոշման ընթացքում: Յայտնի է որ աւշակի աղը բորակածին պարունակող մարմին է. ոորանից կարելի է եզրակացնել որ խմորը, իւր խմորման ժամանակ, աճման կարիքը լրացնելու համար անհրաժեշտ բորակածինը վերջնում է բնական շաքարի մէջ դժուուղ աւշակից:

Եթէ յայտնի նիւթեր զօրեղացնում են խմորումը, ընդհակառակը կան և այնպիսիք, որոնք նսեմացնում են անգամ դադարեցնում են նրան:

Չուրը, մի անհրաժեշտ և հիմնական պահանջ լինելով բոլոր կենդանի մարմինների համար, շաքարի հետ միասին մի ամենաանհրաժեշտ տարր է նաև խմորիչի մնունդի համար: Բայց յայտնի պայմաններում այս երկու մարմինները կարող են արգելք դառնալ խմորի բողբոշման համար:

Օրինակ. Եթէ շաքարը չափից դուրս շատ է, յիշած բջիջները չեն կարող ստանալ իրանց մնադարար մասերը, որովհետեւ շաքարը, իրեւ ազանութեամբ ջուրը ծծող մի մարմին, կուռում է կենդանի տարրի հետ, խլելով նրանից իրան անհրաժեշտ ջուրը և պահելով իւր սէց: Եւ այսպի-

սով, այս մնունդով լիքը միջնավայրում, խմորը քաղցած, ծարաւ և անշունչ մնալով մեռնում է:

Յայտնի է որ քաղցրաւենիները՝ շաքարով պատրաստած պտուղները խմորուելուց (թթուելուց) ազատ պահելու համար չափազանց շաքար են գործ ածում և թանձրացնում ջուրը:

Թանձր ալկոհոլը զսպում է խմորումը. այդ է պատճառը, որ օղիի մէջ դրած մրգեղէնները անփոփոխ պահուում են ամաններում ալկոհոլի և շաքարի սիրոսլի մէջ:

Թթուները, եթէ մի քիչ թանձր են, նոյնպէս արգելք են լինում խմորի բողբոշման. մանրիկ կամ խոշոր վարունգները, քացախի մէջ պահած, շատ համեղ ուսեւելիքներ են, մինչդեռ եթէ նոցա թողնենք օղի մէջ, խմորման աղբեցութեան տակ, շատ շուտ կը փոխեն իրանց համը:

Ծովի աղը կամ բորակը աննպաստաւոր են ալկոհոլային խմորման համար:

Վերջապէս չը մոռանանք աւելացնել, որ բնական գործօնները, տաքութիւնը մանաւանդ, նոյնպէս ունին իրանց ազդեցութիւնը:

Զերմութեան ամենանպաստաւոր պայմաններն են խմորման համար 25° — 35° աստիճանները ըստ Յելսիուսի: 10° -ից ցած կամ 60° -ից բարձր աստիճանները մահացու են խմորի բջիջների համար:

Եզրակացութիւն. խմորումն է „մի շարք քիմիական երևոյթների, որոնք ծագում և զարգա-

նում են կենդանի մարմինների գործող ազդեցութեան շնորհիւ, Dr. Dubief¹⁾:

Ավոնոլային խմորումը պարզում է այդ երեսի ամենատարրական կերպով:

Մնում է մի կէտ ևս, որ մենք կամենում ենք հաստատ տպաւորել մեր ընթերցողների մոքի մէջ. այդ այն է որ կենդանի բջիջների ներկայութիւնը խմորման գործողութեան մէջ ամենաանհրաժեշտ պայմանն է: Եթէ կենդանի բջիջը այստեղ խմորման գործօն է, ապա ուրեմն և, ընդհակառը, չըկայ խմորում առանց բըջիջի գործողութեան:

Դարձեալ Պաստեօրն է, որ տուեց զիտնական ապացոյց այդ բանի համար, որովհետև, երբ նա զուտ միներալային հեղուկի մէջ (տես յօդուածի 8-րդ երեաը, ծանօթ.) ցանեց զարեջրի խմորը, վերջինս առաջացրեց խմորման երևոյթ:

Մենք կը տեսնենք IV դիլում, ինչպէս Պաստեօրը ապացուցեց որ նրա արուեստական հեղուկի (bouillon de culture) նման հեղուկի մէջ ոչ մի խմորում չի կարող ծնել ինինիրան:

Բ.

ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՈՐՍՊԷՍ

Քացախի պայմանը կամ քացախայն խմորում, թան:—Իւղային խմորում.—Մէջի աւշային խմորում.—Փոտում:

Գինուց քացախ ստանալու համար, շիշերը լցնում են գինով և բերանները քաց թողնում:

¹⁾ Dr. Dubief.-Manuel pratique de micro—biologie.

Մի քանի շաբաթից յետոյ, եթէ շիշերի մէջ վազորօք մի քանի կաթիլ պատրաստի քացախ է գցած, գինին բոլորորին կերպարանափոխում է: Այս գործողութեան ընթացքում ավոնոլից առաջ է գալիս քացախային թթու (քացախի քիմիական անունն է): Խմորումն է դորա պատճառը: Մի խմորիչ, այսինքն կենդանի բջիջների մի գաղութ, ցրուելով գինու մէջ, սկսեց կերակրուել, ապրել և բազմանալ ալկոհոլի հաշով: Սակայն այստեղ միջամտեց մի այլ օժանդակիչ գործոն, որ է օդի թթուածինը:

Մինչեւ գարեջրի խմորը իրան հարկաւոր թթուածինը գտնում է նոյն շաքարի մէջ և միմիայն շաքարի մէջ, քացախային խմորիչը (mycoderma acetii), ընդհակառակը, գինին քացախ դարձնելու համար թթուածինը վերցնում է օդից և շնորհում ալկոհոլին: Թէ ինչպէս է կատարւում այդ գործողութիւնը կը պատմենք յետոյ:

Առաջ ծանօթանանք քացախային խմորիչի հետ, որ բակտերիաների խմբին պատկանող սիմանը էակ է (միկրոբ):

Երեակայեցեք թափանցիկ հատիկների մի շարք իրար կպած, ամեն մի հատիկը գլանաձև երշիկի նման, որոնցից իւրաքանչիւրի տարածութիւնն է 1,5—2,5 միլիմետր (միլիմետր—մետրի հազարերորդ մասն է կմայիսիստեմիտրի տասներորդ մասը): Վայովէն են քացախայինին խմորիչները այն մածուցիկ թաղանթի մէջ որը լողում է քացախի երեսին: ԱՅԱՌԻԿԱՆԻ ԱՆԴ



Այդ խմբի անհատները (քացախի խմորիչները) չեն բազմանում բողբոջմամբ, ինչպէս գարեջրային խմորի անհատները, այլ բաժանուելով. նախ կազմակերպուած բջիջի շուրջը երկում է մի հասարակածային գիծ, յետոյ այդ ակոսը սկսում է խոր ընկնել մինչև որ առաջի բջիջը բաժանում է երկու աղջիկ-բջիջի, որոնք մեծանալով համում են իրանց (առաջի) բջիջի մեծութեան:

Այժմ տեսնենք թէ ինչպէս է այդ մարմինը, որի մասին խօսում ենք, կատարում գինու խմորումը, երբ նա ցանած է լինում վերջինիս մէջ:

Խմորիչը օդից կլանում է յայտնի քանակութեամբ թթուածին և միենոյն ժամանակինուց վերցնումէ ամսքան ջրածին, որքան հարկաւոր է, որ ջրածինը և թթուածինը քիմիապէս միաւորուելով կազմեն ջուր, որ ասել է թէ բաշով մի մաս թթուածինին հարկաւոր է երկու մաս ջրածին: Այդ միենոյն մանրամարմինը վերցնում է օդից թթուածինի էլի մի մաս, որ ծառայում է քացախային թթու գոյացնելուն: Այսպէս ուրեմն քացախային թթուն պարունակում է իւր մէջ երկու մաս ջրածին պակաս և մի մաս թթուածին աւելի քան ալկոհոլը:

Քացախը կարող է ստացուել և առանց խմորիչի միջնորդութեան. անա այն դասական փորձի սկզբունքը, որով ալկոհոլը փոխում է քացախային թթուի սև լմոսկու միջոցով (la mousse de platine):

Ալկոհոլի գոլորշին օդի հետ խառը անց են կացնում սև լմոսկու վրայով առանց տաքացնեու: Այդ ժամանակ ալկոհոլը կորցնում է իւր թթուածինի մի մասնիկը երկու մասնիկ ջրածինի հետ (ջուր) և, փոխարէնը օդից ընդունելով երկու մասնիկ թթուածին, փոխում է քացախային թթուի: Այսինքն կատարում է միենոյն բանը, ինչ որ անում են մանրամարմինները:

Բայց այդ չէ սովորական միջոցը արտեստական քացախ պատրաստելու համար:

Այն նիւթը, քացախի մայր անունով, որը մրուրի նման գտնում է քացախի տակառների մէջ, կարող է ալկոհոլը քացախ դարձնել, որովհետեւ նա պարունակում է իւր մէջ քացախային խմորիչ:

Ալկոհոլից քացախ ստանալ կարելի է նոյնպէս, երբ քացախի մայրի տեղ գործ ածենք օփիի տաշեղ, որովհետեւ, ինչպէս ապացուցեց Պատեօրը, այդ տաշեղը ծածկուած է նոյն խմորիչներով:

Այս գլխի սկզբում ասացինք որ գինին քացախ դարձնելու համար հարկաւոր է վաղօրօք նորա մեջ զցել մի քանի կաթիլ քացախ: Դա միայն նորա համար չէ որ այդպիսով խմորման բողբոջում առաջացնենք, այլ և նրա համար, որ թթու հեղուկի մէջ քացախային խմորիչները աւելի լաւ են զարգանում:

Չը թթուացրած գինու մէջ, իսկապէս, քացախային խմորիչը կարող է հանդիպել մի թշնա-

մու, որի մասին խօսեցինք անցեալ գլխում. դա զինու միկողերմն է, որը առաջացնում է խմորում իւր տեսակին համեմատ և տալիս է այդպիսով ալվար զինու խմորում և ոչ քացախային խմորում, որին նա հակառակ է: Քացախային թթուն սպանում է զինու միկողերմին. և ահա ինչու քացախի մի քանի կաթիլը պատրաստում է զինու մէջ նպաստաւոր կենսական ասպարէզ քացախային խմորիչի համար:

Այս վերջին մանրամարմինը (միկրօօրգանիզմը) չէ բաւականանում նրանով որ թթուածին է շնորհում ալկոհոլին, իւր մննունդի համար փոխելով նրան քացախի, այլ նա ապրում է նոյնպէս և իւր պատրաստած քացախի հաշով, երբ այլ ևս չէ գտնում ալկոհոլ:

Ալկոհոլի խմորման այդ վերջին աստիճանում, խմորուող հեղուկը բոլորովին սպառուում է, փոխադրուելով գազային թթուածինի և ջրի: Այդ միւնոյն ալկոհոլային վերջնական կերպարանափոխուին է տեղի ունենում, երբ ալկոհոլը այրում են օդի մէջ:

Այրելով ալկոհոլը մենք քիսիապէս նրան արագ քայլերով վերափոխում ենք իւր թռուցիկ մասերի. մի բան որ խմորը կատարում է նոյնպէս միայն շատ դանդաղ կերպով, նախապէս ալկոհոլը քացախ դարձնելով: Ալկոհոլի կապոյտ բոցը մի լուսային և գունաւոր երեսյթ է, որը ուղեկցում է ածխածինի գոյանալուն ալկոհոլի արագ այրուելու ժամանակ:

Այժմ անցնենք միւս խմորումների արագ տեսութեան, վերցնելով միայն ամենայայտնիները նոցանից:

Թթուած կաթը կամ թանը (մածոն), որից Շէէլը առաջինը ստացաւ կաթնույին թթու (Vaccide lactique) 1780 թւին, խմորման արգիւնք է, որը պարտական է կաթի բացիլին (bacillus lacticus), ինչպէս այդ ապացուցեց Պաստեօրը:

Կաթնային խմորման հետեանքն է նաև կանաչ կաղամբի՝ թթու կաղամբի փոխուիլը և բըրինձի ջրի թթուիլը:

Այս տարբեր երեսյթների մէջ կենդանի տարբերը յարձակում են շաքարի վերայ, վերափոխելով նրան կաթնային թթուի, առանց սակայն փոխելու թթուածինի, ջրածինի և ածխածինի յարաբերական չափերը:

Վերջին երեսյթը ըմբռնելու համար, համեմատեք կաթնային կամ խաղողի շաքարը կերպարի հետ, որը հիւսուած է երեք գոյնի թելերից: Երեակայեցէք թէ այդ գոյները դասաւորուած են միյայնի կարգով, որը կրկնում է այդ կտորի երկարութեամբ շերտերի նման: Մի երեակայական արուեստագործ, զիցուք, քանդում է այդ հիւսքը կազմող բոլոր թելերը, որ յետոյ միւնոյն թելերից կազմի մի ուրիշ կերպաս, ամեն կողմից նըման առաջինին, միայն արն տարբերութեամբ, որ գոյները դասաւորուած լինեն ուրիշ կերպ: Դիցուք նա ամեն մի շերտը կազմելու համար գործադրութ է առաջւայ թելերի կէսը, այդպիսով

կրկնապատկելով շերտերի թիւը։ Այն տպաւորութիւնը որ կը գործի մեր աչքերի վերայ նոր հիւսուածքը, բոլորովին կը տարբերուի առաջինից, չը նայած որ մինոյն տարբերն են միայն դաստիւրուած ուրիշ կերպով։ Նոյն տեսակի գործ է յանձն առնում կաթնային բացիլը կաթնային շաքարի (լակտոզ) կամ խաղողային շաքարի (գլուկոզ) տարբային կազմուածքի վերաբերեալ՝ նոցա կաթնային թթուի վերափոխելու համար։

Կաթնային բացիլները բաւականնման են քաշախային խմորիչին, միայն նոքա չեն ապրում շարբով կապուած միմեանցից, այլ մէկը միւսից զատ։

Ուրիշ մանրէակներ էլ ընդունակ են կաթնային խմորում առաջացնելու։ Նոքա գանուում են նոյնպէս լորձունքի մէջ։ Կէֆիրի «սերմը», որը չորացրած և փշրած խմոր է, գարեջրի խմորին նման ապրում է մի ուրիշ մանրամարմնի հետ միասին և գործ է ածւում չիւսիսային կովկասում։ Նորանով խմորում է ոչխարի և այծի կաթը, որ փոխուելով թթուաշ և գազով հարուստ հեղուկի գործ է ածւում իբրև խմիչք։

Կումիսը, որ յայտնի է իբրև բժշկական միջոց որոշ հիւսնդութիւնների դէմ, պատրաստըւում է նոյնպէս խմորման միջոցով մատակ ձիու կաթից։

Բացիլ ամիլորակտեր անունով բացիլը նըման է զլանածեւ փայտի, որը մի ծայրում ուռչում է, երբ բացիլը սկսում է սերմ արտադրել։

Դա զառնահամ իւղի մանրէակն է, որտեղից և անունն է՝ իւղային խմորում։ Վերջինս տուած է նորա շնորհիւ որ այդ բացիլի զարդանակն է գլխաւոր կամ նպաստաւոր պատճառը իւղի քիմիական փոփոխման։

Սյու մանրէակը դեր է կատարում և պանիրի խմորման մէջ։ Նա գործում է նոյնպէս և բուսական բջիջի մէջ, որի ներսը նա քանդում է բնախօսական (physiologique) շատ հետաքրքիր հնաբքով, նման լորձունի կատարած պաշտօնին ալիւրի մարսելուն մէջ։

Լորձային գեղձերի արտադրած լորձունը պարունակում է այնպիսի գործօն, որը ընդունակ է ալիւրը կամ օսլան դարձնել շաքար (գլուկոզ)։ Ալիւրը, ջրի հետ խառնած, չէ կարող այս գրութեամբ անցնել մարսողութեան գործարանի պատերը, որպէս զի մատակարարի արիւնին հեռաւոր հիւսքերի մնունգի համար անհրաժեշտ հիւթեր, մինչդեռ շաքարի փոխուելով նա լուծւում է ջրի մէջ և կարողանում է հեշտութեամբ անցնել մարսողութեան խողովակի ծակոտիկները և հարստացնել արիւնը վերանորոգիչ հիւթերով։

Լորձային գեղձերի նման, բացիլը ամիլորակտերը արտադրում է մի քիմիական հիւթ, որը ընդունակ է ալիւրը կերպարանափոխել շաքարի։ Իսկ ցելլուլոզը, որով կազմուած են բուսական բջիջների պատերը, ալիւրի բնութեամբ մի մարմին է, ուրեմն նա ևս կարող է յիշած մանրէակի ազդեցութիւնից փոխուել շաքարի։ Ա-

լիւրը շաքարի փոխելուց յետոյ, բացցիլը առաջացնում է նորա մէջ խմորում, որը օգտակար է իւր աճման համար:

Վան-Տիգենեմը, գիտութեանց ձեմարանի անդամ, Պարիզի թանգարանի ուսուցչապետը, մանրամասն բացատրեց մեզ հետաքրքրող միկրոբի գործունէութեան ձևը, գործունէութիւն, որով մարդս օգտում է կանեփը կամ կտաւալ թըր-ջելու համար: Այս վերջին գործողութիւնը կայանում է նրանում որ հիւսելի բոյսը, քաղելուց յետոյ, ածում են կանգնած ջրի մէջ: Այս պայմաններում բացիլ ամիլոբակտերը քանդում է բջիջին հիւսփերը կապող միջամար (substratum) վերջինս վերափոխելով շաքարի: յետոյ ջուրը, լուծելով շաքարը, հիւսփերը բաժանում է միմիշանցից և հանում է բջիջների մէջ պարունակուող հիւթերը: այսպիսով հիւսելի թելերը առանձնանում են:

Երկրախոսական (géologique) ամենահին ժամանակներում ևս գոյութիւն է ունեցել բացիլ ամիլոբակտերը. այդ երկում է նրանից, որ քարածխային շրջանի բոյսերից մնացել են միայն ոչըջիջային մասերը:

Վերջապէս այդ միենոյն մանրէակն է, որ որոճող (խոտաճարակ) կենդանիների սասամքսի սէջ մարսում է, ինչպէս լորձունքը մարդու մօտ, բոյսերի օպլոյին մասերը, որով կերակրուում են կաթնասուները:

Այս երկու հետաքրքրական գիտնական երե-

ւոյթները, ինչպէս և նախընթացը, բացատրուած են ուսուցչապետ Վան-Տիգենեմի կողմից:

Մենք չենք կարող փակել բացիլ-ամիլոբակտերի պատմութիւնը, չիշշատակելով այստեղ և Պաստեօրի երևելի գիւտի մասին:

Մինչև այս գործը, որի մասին մենք ակնարկեցինք, կարծում էին թէ առանց օդային թթուածինի ոչ մի կենդանի էակ չէ կարող գոյցութիւն ունենալ. բացիլ ամիլոբակտերը, համապատասխանելով կենդանու բոլոր պահանջներին, ապրում է սակայն առանց օդային թթուածինի:

Պաստեօրը անուսնեց անօդակեաց (anærobiosis) մանրէակներ նոցա, որոնց տիպն է իւղային խմորման բացիլ, որ բուսական և անամսական խորին հիւսփերը կազմող ներձական (անտոմիական) տարրերի նման, ապրում է առանց օդի:

Խմորիչները կամ մարմինները, որոնք ապրելու համար անմիջապէս պիտի օգտուեն օդային թթուածինից—ընդհակառակը, կոչւում են օդակեաց (aérobies):

Մենք նոր տեսանք թէ բացիլ ամիլոբակտերը արտադրում է մի բան, որը շատ նման է լորձային գեղձերի արտադրածին և փոխադրում է, ինչպէս այս գեղձերը, ալիւրը՝ խմորուելու ընդունակ շաքարի: Համանման կերպով է գործում և մէջի միկրոկրկիլ միզային հեղուկի խմորումը առաջացնելու համար:

Այս խմորը բաղկացած է 2 հազարական

միլիմետր մեծութեամբ բջիջներից կազմում են ծամածուած կամ գծկած շղթաներ. դա կոլոր միկրոբների տիպ է ներկայացնում:

Դորա ներգործութիւնը կայանում է նրանում, որ դա վերլուծում է մէզի մի տարրը, ուր կոչում է մեղատարը (мочевина, l'urée).

Մէզատարը գործարանների չը իւրացրած մասն է կազմում: Ինչպէս յայտնի է, արիւնը մի կողմից մնունդ է մատակարարում կենդանի մարմնի բոլոր մասերին, իսկ միւս կողմից նա մարմնի միջից ժողովում է այն աարբերը, որոնք մնացել են հիւսքերի մնունդից. Մէզատարը այս վերջինների թւին է պատկանում: Մէզը մէզատարի հետ միասին հեռացնում է մարմնից այն բոլոր չը իւրացրած տարբերը, որոնք չեն քշուած մարմնից թոքերի միջոցով, ինչպէս ածխաթթուն և ջրային գոլորշին, և քրտինքի միջոցով՝ իրեն հեղուկ: Մենք չենք խօսում կղկղանքի մասին, որովհետեւ նոքա արտաքսում են առանց հիւսքերի մէջ մտնելու:

Մէզը պարունակում է իւր մէջ զանազան աղեր ջրում լուծուած գրութեան մէջ, նոյնպէս և մէզատարը. վերջինս լինում է քանակութեամբ մօտաւորապէս 30 գրամ 24 ժամւայ ընթացքում, երբ մարդը առողջ է: Մէզատարը, որ կարող է ստացուել թափանցիկ ասեղների ձեռփ, մի գործարանական (օրգանական) մարմին է, որ ասել է թէ նա պատրաստում է կենդանի մարմինների միջոցով, ինչպէս օսրան, ճարպը և այլն...

Միայն օգտակար տարր չէ, այլ, ընդհակառակը, վեասակար:

Շատ ժամանակ բժիշկը ստիպուած է լինում քննել հիւանդի մէզը, որպէս զի իմանայթէ արգեօք մէզատարի քանակութիւնը չէ շատացել մէզի մէջ, որովհեակ յաճախ դա է լինում հիւանդութեան պատճառը: Մէզարիւն (l'Urgémie) կոչուած սարսափելի հիւանդութեան ժամանակ, երիկամունքը յետ է դառձնում արեանը այն քիմիական տարբերը, որոնց նա պիտի առնէր մէզ պատրաստելու համար, իսկ այս վերջին հեղուկը (մէզը) մարմնի մէջ կատարում է մահաբեր թոյնի դեր:

Եւ ահա մէզի միկրոկոկը, իրեն խմորիչ, յարձակում է մեզատարի վերայ և վեր ածում է նրան եռկու թոռուցիկ մասերի, ածխաթթուի և աւշակի (l'ammoniaqne), երկու վասակար գաղերի, որոնցից երկրորդը ունի կծու, նեխած և հեղձուցիչ հոտ, որը մասերով քթապձերը ծակծկում է յուզաթաղանթը և լացացնում է: Դա այն անտանելի հոտն է, որը փչում է կեղուոտ հրապարակական մէզարաններից:

Բայց այս միկրոկոկը միայն օդի մէջ կարող է խմորիչի դեր կատարել և ոչ երբէք մարմնի մէջ. ահա թէ ինչու բնաւ մէզատարի աւային խմորում չէ լինում, երբ մարդ պահում է իւր մէզը մէզափամիկուշտի մէջ:

Վերջին նշանաւոր խմորումը, որի մասին պիտի խօսենք ընթերցողի հետ, է վատմը. նրան,

Պաստեօրի գործերի շնորհիւ, պէտք է դասաւուրել մեր նկարագրած խմորման երևոյթների շարքում:

Հէնց որ կեանքը անհետանում է մարմնի միջից, վերջինս ժառանգում են անօդակեաց մանրամարմինները, որոնք յարձակուելով նորա վերայ, անընդհատ և յաջորդական խմորումներով կամաց-կամաց այրում են դիակը: Եւ երբ քայքայման գործը կատարելապէս վերջանում է, այն ժամանակ մնում են միայն մեռելակեր մանրէակների սերմերը, որոնք պատրաստ են նորից կենդանանալու իրանց նախկին ձևերով, հէնց որ կը գտնեն համապատասխան հող իրանց զարգացման համար:

Այս բոլոր մեռած մարմինների տէրերի՝ մանրէակների՝ շնորհիւ, երկրիս մակերևոյթը կրկին յետ է ստացել քիմիական տարրերը, որոնք զարգացել են այն բոլորի մէջ, ինչ որ ապրել է մինչև հիմայ, սկսած այն օրից, երբ երկրագնդիս վերայ սկիզբ առաւ կեանքը:

9.

ՄԱՆՐԷԱԿՆԵՐ ԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Մանրէակաւոր հիւանդութիւններ.—Բակտերիաների մշակումը.—Պաստեօրի պատուաստումը.—Նորա գործադրութիւնը առողջապահութեան եւ բժշկութեան մէջ.—Հակախոռութիւն (antisepsie), զուռմն (filtration), ախտանինութիւն (desinfection):

Նախորդ երկու գլուխներում, որոնք նուիրուած էին խմորման երևոյթի ուսումնասիրութեա-

նը, մենք ծանօթացրինք յայտնի քանակութեամբ մանրամարմինների հետ, և ընթերցողը կարող է այժմ հեռու լինել սարսափից, որ առաջացնում է մանրէակ (միկրոբ) խօսքը այն մարդկանց մէջ, որոնք փոքրիկ էակներին ճանաչում են միայն հիւանդութիւններից, որ նորա տարածում են մարդկանց մէջ: Այն, անկասկած, օգտակար մանրէակներ էլ կան:

Բայց կան և այնպիսինները (և գոցաթիւ շատ է), որոնք մեր ահաւոր թշնամիններն են: Օդը, ուրով մենք շնչում ենք, ջուրը, որ մենք խմում են, կերակուրը, որ մենք ուտում ենք, անհրաժեշտ լինելով մեր գոյութեան համար, այնուամենայնիւ կարող են պարունակել իրանց մէջ վշտալից օրհասական մահու սերմեր:

Հարինքը (ափի), խոլերան, բարակացաւը և շատ ուրիշ հիւանդութիւններ մանրէական ծագումն ունին: Այս թշնամինների դէմ բժշկութիւնը և առողջապահութիւնը կարողանում են մաքառել, երբեմն յաջողութեամբ, այն օրից, երբ իմացուեց նոյա գոյութիւնը և ապրելու միջոցները: Մաքրութեան յայտնի պայմանները, խելացիութեամբ գործադրուած, երբեմն արդէն բաւական են շատ ծանր չարիքներից մեզ պաշտպանելու համար:

Վնասակար մանրէակները, որոնք յարձակւում են մարդկանց կամ անսառունների վրայ, մտնում են նորա մարմնի մէջ՝ կամ ուտելեղէնի և խսիչքի հետ, կամ շնչառութեան միջոցով կամ վնասուած կաշուի սիջոցով:

Մարդկային մարմինը, կարելի է երևակայել իբրև մանրագիտային էակների մի ահազին խոռումք, որոնք ապրում են մանրէակների նման, այն զանազանութեամբ, սակայն, որ, տարբեր կերպարանք և պահանջներ ունենալով, նրանք պահպանում են մի հաւաքական գոյութիւն և փոխադարձաբար օգնում են միմեանց: Առեն մէկ բջիջ կատարելով հանգերձ իւր յատուկ դեռը, բոլորը միասին աշխատում են ամբողջ խմբի կեանքի համար, և այնպիսի կատարելութեամբ է բաժանուած բոլոր աշխատութիւնը, որ ամբողջ մարմնի կեանքը ներկայացնում է ոչ այլ ինչ, եթէ ոչ ամեն մի տարրի մասնաւոր աշխատանքի հետեանք:

Արեան կարմիր գնդակները, կլանելով թռքերի միջից թթուածինը, տանում են նրան դէպի գործարանները, որոնք ունին այդ գազի պահանջը. այն բջիջները, որոնք ծածկում են լորձային կամ կաթնային գեղձերի ներսը, առնում են արեան միջից քիմիական անհրաժեշտ տարրերը՝ լորձունք կամ կաթ պատրաստելու համար. ատամի միջուկի տարրերը վերցնում են անհրաժեշտ ազեր՝ ատամ պատրաստելու համար, և այլն:

«Եյս կենդանի սիութիւնները, ինչպէս շատ յաջող համեմատում է դիւկլօն իր «Մանրէակ և հիւանդութիւն» (Le Microbe et la Maladie) վերնագրով գեղեցիկ զրքի մէջ, իրանց գումարումով կազմակերպում են մի կատարեալ թագաւորութիւն, փոքր ի շատէ ծաղկեալ քաղաք-

ների դաշնակցութիւն, որոնցից ամեն մեկը ունի իւր սեփական կեանքը, բայց և որոնցից իւրաքանչիւրը իւր գոյութեան համար պահանջում է յատուկ պայմաններ: Աստիկանի դեր կատարող բջիջները պահանջում են առանձին մնունդ, որը պիտի բերուի նոցա բաւարար քանակութեամբ բազմաթիւ անօթների միջոցով. անօթներ, որոնք միացնում են մարմնի զանազան մասերը միմեանց հետ, մեր ճանապարհների և ջրանցքերի նման: Հարկաւոր է նոյնպէս որ ամեն մի բջիջի կեղտոտ արտադրութիւնը արագ ելք գտնի և որ առուների մի ցանց, ներեցէք ինձ այս ոճը, գուրս տանէ նոցա օրական արտաթորութիւնները: Հարկաւոր է, վերջապէս, որ նոքա կարողանան հազորդակցուել միմեանց հետ և հնագանդեն մի կենտրոնական ոյժի, որը նոցա կը կառավարէ: Վերջին դերը պատկանում է ջղագին սիստեմին, զարմանալի կերպով կազմակերպած, որի ճիւղաւորութիւնները նմանում են, իմ արած համեմատութեան մէջ, հեռագրային թելերի ցանցին:

Առողջութիւնը հետևանք է բոլոր մասերի լաւ գործողութեան, ամեն մէկի կատարած աշխատութեան գաշնակցութեան, փոխադարձ օգնութեան, որը նոքա միմեանց հասցնում են: Տեսնենք թէ որոնք են այն պայմանները, որոնք խախտում են այդ գաշնակցութիւնը: Նախ և առաջ, գա հէնց բջիջների հասակն է. այդ թագաւորութիւնը, որ այդպէս ծաղկում է իւր գոյութան սկզբում և երիտասարդութեան տարիքում,

յետոյ տարէցաարի կորցնում է իւլ՝ ոյժերը։ Այսուհետև իրանց զգալ են տալիս սպառման և զառամութեան շրջանները՝ մահը վրայ է հասնում, և այդ կարող տէրութիւնից մնում են միայն ողորմելի մասեր, փառաւոր անցեալի հետքեր, նման այն արձաններին, որոնց գտնում է հնագէտը իւր անընդհատ պեղումների ժամանակ, և որոնք ցոյց են տալիս իրանց գոյութեամբ, որ մի երկելի քաղաք, կամ մի մեծ ազգ ապրել է այդ երկրում, որը այսօր ամայացած է։

Կամ դա թշխների գոյութեան համար անհրաժեշտ մնունդն է, որը չի ստացուել հարկաւոր քանակութեամբ. մնունդը հասցնելու համար որոշած ճանապարհը փակուելով, քաղաքը սովոր մեռել է։

Կամ, դիցուք, փակւում են արտաթորութեան անցքերը, և ինչպէս մեր մեծ քաղաքները ապականուում են խողովակների փառ գործունէութիւնից, նոյն եղանակով մարմինը թունաւորում է արտաթորութիւնների կուտակումով։

Վերջապէս կարող է պատահել որ յայտնի քաղաքներ կը խախտեն դաշնը, որ միացնում է նոցա միմեանց հետ. նոքա կը կամենան ապրել անկախ կեանքով. թշխները կը սկսեն անկարգ կերպով գարգանալ և, չը հնազանդելով կենարոնի ոյժին, պատճառ կը գառնան ամբողջ մարմնի նուազման կամ մահին. այս պատահում է վտանգաւոր ուռուցների դէպքում (ռակԵ)։

Այս թաղաւորութիւնը, այսպէս լաւ կադ-

մակերպած, ունի իւր սահմաններում անթիւթշնամիներ, որոնք անդադար յարձակւում են նրա վրայ։ Այդ թշխնամիները բարբարոսներ են, որոնք միայն մի օրէնք են ընդունում՝ բազմանլու օրէնք. նոքա ունեն անհատական կեանք և բաւականանում են շատ քչով, համարեա թէ ոչընչով. դոքա ախտաբեր մանրէակներ. են։

Հէնց որ մի փոքրիկ ձեղք բացուի կաշւի վրայ, այդ միկրոբները կը մտնեն մարմնի մէջ, և բաւական է մի քանի ժամ երբեմն, յայտնի պայմաններում, որ վերստին քայլայեն մի առողջ մարմին։ Բայց այսպէս չէ միշտ և, բախտաւորապէս, մարմնի լաւ կազմակերպութեան ջնորհիւ, ջնորհիւ նրա գեղեցիկ հսկողութեան, որ կատարում է մարմնի բոլոր սահմաններում, արշաւանքը չէ կարողանում գլուխ գալ, կամ, եթէ նա կատարում է, հէնց առաջին գրաւողները իսկոյն դուրս են մղւում երկրից կամ ջարդում են¹⁾.

Յայտնի պայմաններում երբ ընդդիմադրութիւնը թուլանում է մի քանի կէտերում, մանրամարմինները գրաւում են սահմանի այդ մասերը՝ վերջնականապէս, կամ ժամանակաւորապէս։ Ամրանալով գրաւած տեղում, մանրամարմինները ձգտում են նոր արշաւանքներ գործել

1) Մարմնի ինքնապաշտպանութեան մի զարմանալի օրինակ է ներկայացնում սիրիբեան ախտը. դոքա միկրոբները արիսնի մէջ կուլ են գնում սպիտակ գնդակներին, որոնք նոցա ուռելով ոչնչացում են։ Ծ. Հ.

թշնամու երկրի մէջ, բայց, եթէ լաւ միջոցներ են ձեռք առնուած, եթէ նորա սահմանները լաւ պաշտպանուած են, ապականութիւնը (ինֆեկցիա՞ն) կը մնայ իւր տեղում, և նոյն իսկ մարմինը, նոր ոյժ սանալով կուելու նոր տարրեր ժողովելով, կարող է դուրս քշել իւր սահմանից բարբարոսներին: Այդ բանը կատարւում է շատ հիւանդութիւնների նկատմամբ. օրինակ բարակացաւը (տուբերկուլոզ), որը, որպէս տեմնում ենք, երկար տարիներ, երբեմն ամբողջ կեանքը շարունակ, մնում է սահմանափակուած մարմինի մի կէտում և որը կարող է նոյն իսկ լաւանալ առանց որ միկրոբները գրաւեն ամբողջ մարմինը:

Միւս պարագաներում մանրէակների անընդհատ ածումը, որը նոյցա յաղթութեան և մարմինի գրաւման պատճառներից մէկն է, իրանց սեպիական կորստի պատճառ է դառնում. սկըզբում նոքա նուածած երկրի մէջ գտնում են հարուստ մթերք. յետոյ նոյցա թիւը շարունակ բազմանալով, վերջաննում է անցողական երջանկութիւնը. այն ժամանակ թշուառութիւնը և մահը իրանց կողմից սկսում են հալածել նոյցա և, եթէ մարմին տնտեսութիւնը մի քանի մասերում դեռ վերջանականապէս չէ քայլայուած, թագաւորութիւնը կը վերածնի իւր մոխիրի տակից և, զանագան շրջանների միջով անցնելով, կը վերականգնի անցեալ գործունէութիւնը և փայլը: Այդ պատահում է այն դէպքերում, երբ հիւանդը

առողջանում է վորքը ի շատէ երկար հիւանդութիւնից յետոյ (օր. տիֆ.):

Վերջապէս, երբեմն, յարձակուող թշնամուն ջախջախելու համար, մարմինն կարող է բարձրացնել, այսպէս ասած, առանձին գնդեր և պատրաստել, ինչպէս շատ հանձարեղ կերպով առել է մեր ընկեր Լեգրիւն, բջիջների վաշտեր, որոնք ծանօթ կը լինեն յարձակուող թշնամու կուելու եղանակին և որոնք վարժուած են արդէն նախսորդ արշաւանքների շնորհիւ՝ կուել թշնամու դէմ և ընդդիմագրել արշաւախմբին: Ուուս գիտնական Մեջնիկովը այդ յատուկ գնդերին ժապոցիսներ անունն է տուել....

Մի այլ դէպքում մարմինը կարող է օգնութեան կանչել ուրիշ մանրէակներ, որոնք կը գան ջաջախելու յարձակուող թշնամում....

«Այս կուի մէջ, որ վարում է մարմինը ամեն օր և ամեն րոպէ յարձակուող տարրերի դէմ, կարող են արդեօք միջամտել բժշկութիւնը և առողջապահութիւը, և օգնել մարմինն ազատուելու նրան վտանգի ենթարկող տարրերից: Անշնւշտ...» (Դիմադրդէն-Բոմէտց¹⁾):

Վերև բերած տողերը, որոնք պատկանում են զբականութեան և գիտութեան մէջ շատ յայտնի մի հեղինակի, բացատրում են մեզ թէ ինչպէս բժշկութիւնը կարող է կատարուել ինքն իրան, և որ նա հետևանք է մի կուի, որը տեղի է ունե-

¹⁾ Dujardin-Baumietz. Conférences de thérapeutique de l'hôpital Cochin. I հատոր:

նում բնական տարրերի, որոնցից կազմուած է մարդուս մարմինը, և ախտաբեր մանրէակների մէջ:

Բժշկական կամ խիրուրգիական (վիրաբուժային) միջամտութիւնը այժմ շատ աւելի յաճախ է, քան երբ և իցէ, չնորհիւ այն բանի, որ այժմ յայտնի են վնասակար տարրերը: Առողջապահութեան գիտութիւնն էլ այժմ շատ հարըստացել է պաշապանողական միջոցներով:

Յայտնի միջոցներ, որ ախտահան անունն են կրում, որոնց մասին կը խօսենք մի քիչ յետոյ, այժմ սովորական միջոցներ են, և պատշաճութեամբ գործ ածելիս, բժշկում են կամ դէպքերի առաջն են տռնում, մինչդեռ, անցեալում, յայտնի հիւանդութիւններ անխուսափելի մահ էին բերում կամ վտանգաւոր բարդութիւններ առաջացնում:

Մինչև Պաստեօրի գիւտերը օպերեցիա անող խիրուրգը զգուշութիւններ էր գործադրում և յայտնի խնամք էր տանում մաքրութեան համար, լւանալով, օրինակ, կտրուելի մասերը կարբուեան ջրով: Բայց նոքա բաւականանում էին նրանով որ գործիքները զցում էին գոլ ջրի մէջ և յետոյ սրբում. Նրանք մինչև անզամ կարող էին ասել. «արիւնը կը լուանայ գործիքները»: Այն վատ լրւացած գործիքների վրայ, ի հարկէ, լինում էին բաքտերիաներ, և նաշտարը յաճախ հիւանդի համար մահացու գործիք էր դառնում: Միմիայն սապոնով լրւացած մատների վրայ բժիշկը կրում

էր ախտաբեր մանրէակների գաղութներ. Նրա ձեռները, որ նա դնում էր նրան հաւատացող հիւանդի վէրքի վրայ, ցանում էին մահացու սերմեր:

Իսկ այսօր խիրուրգների ամենահամարձակ ձեռնարկութիւններն իսկ պսակւում են կատարեալ յաջողութեամբ, որովհետև ամենը, ինչ որ կպչում կամ մօտենում է հիւանդին օպերացիայից առաջ, օպերացիայի ժամանակ, կամ յետոյ, մաքրուած է վտանգաւոր մանրէակներից:

Ախտահան միջոցների մէջ ամենասուժեղը և ամենագործածականներից մէկն է սուլեման, որը շատ վտանգաւոր թոյն է:

Եւ ահա լուծուած սուլեմի կամ, աւելի լաւ, լուծուած կարբուեան թթուի մէջ պահւում են գործիքները, որոնք նշանակուած են օպերացիայի համար: Սրբում են նոցա նոյնակէս ախտահանած շորերով, նախ և առաջ լոււանալով իրանց ձեռները ախտահան հեղուկի մէջ: Այդ հեղուկով նոյնակէս մաքրուում է վէրքը. բամբակը, որը գործ է ածւում վէրքի համար, նոյնակէս ախտահանած է: Ո՛չ մի օգնական չի մօտենում և չի միջամտում օպերացիային, մինչև որ ախտահան միջոցներ չէ գործադրել, չի լուացուել և չի հագել ախտահանած սպիտակեղէն:

Երբ բոլոր առաջարգել (պրոֆիլակտիք) պայմանները կատարուած են, այն ժամանակ օպերացիայի յաջողութիւնը ընդհանրապէս ապահովուած է:

Այն օրից երբ գործ են ածւում պրոֆիլակտիք միջոցներ ախտաբեր մանրէակների գործունէութեան դէմ, թարախային հիւանդութիւնները, ինչպէս Ահստոնեան կրակը (կամ փութախտ) և ուրիշներ, այլ ևս չեն թագաւորում հիւանդանոցների և բժշկական ծառայողների մէջ, ինչպէս շատ յաճախ պատահում էր առաջներում:

Այժմ խիրուրզը (վիրաբոյժ) սի օրում կարողանում է բազմաթիւ ամենածանր օպերացիաներ անել փորի գործարանների կամ ուղեղի վրայ, և մեծ յաջողութեամբ:

Մենք հիմա կը տեսնենք այս զլիսում թէ ինչպէս Պաստեօրը, որոշելով մանրամարմինների կատարած զերը խմորման գործում, ձեռնարկեց ապացուցանելու մանրէակների զերը հիւանդութիւնների վերաբերեալ, և ինչպէս լոյսով լուսաւորեց բժշկութեան, մինչ այդ անծանօթ, դաշտի հորիզոնը:

Ահա ինչու այն գովեստները, որ գրւում են Պաստեօրի հասցէով, երբէք չեն հասնի այդ փառաւոր գիտնականի մարդկութեանը արած ծառայութիւնների բարձրութեանը. զիսնականի, որի ամբողջ կեանքը գիտերի և գիտնական աշխատութիւնների ահազին շարք է ներկայացնում:

Սիրեիրեան ախտի բաքտերիաների վերաբերեալ գործերն են, որ Պաստեօրին մղեցին զուտ գիտնական շրջանից դէպի բժշկական շրջանը:

Ո՞վ չգիտէ սիրեիրեան ախտը դէթ իւր սոս-

կալի անունով: Յաճախ այս սարսափելի հիւանդութիւնը, որ սակայն բախտաւորապէս սակաւէ պատահում մարդկանց մօտ, կաչում է նրանց, որոնք, իրանց արհեստի շնորհիւ, ստիպուած են ձեռք տալ անային կենդանիների՝ մամնաւորապէս եղան և ոչխարի՝ զիսկեները, որոնք սատկել են այդ ախտից: Այդ հիւանդութիւնը կարող է նոյնպէս տարածուել ճանձերի միջոցով, որովհեն նոքա, նստելով դիսկեների վրայ, իրանց թաթիկների մասերով վերցնում են բազմաթիւ մանրէակներ: Եթէ այդ ճանձը նստէ մարդու վասաված կաշտի վրայ, բնականաբար կը ցանէ նրա մէջ բաքտերիաներ:

Իւր վարակելու և վտանգաւոր հետևանք ունենալուն պատճառով սիրեիրեան ախտը կոչւում է վտանգաւոր պղուկ (rustulus malignus): Նա սկզբում երկում է մի փարբիկ բշտիկի ձեռվ, շրջապատուած կարմիր, կոլոր շրջանակով և լիքը հեղուկով. նա մրմնջում է: Բշտիկը պայթելով՝ նրա մէջտեղում երկում է մի կոլոր մէխ, որը արագ մեծանալով սեանում է: Միենոյն ժամանակ կարմիր մասի շուրջը ծագում են ուրիշ բշտիկներ, նման առաջինին: Հիւանդութեան ասպատակութիւնը մարմնի մէջ կատարուում է աննշտարելի կերպով. առաջին նշաններից մի քանի օր անցած հիւանդը սկսում է տաքացնել, շնչառութիւնը խանգարւում է, փորը լուծում, սիրտը խառնում և նա համարեա օրհասական կերպով մեռնում է:

Սիբիրեան ախտը կարող է հաւասարապէս ներս մտնել և աղիքների միջով և տաքութիւն առաջ բերել։ Առաջ սկսում է սաստիկ փորացաւ, յետոյ հիւանդը փախում ու լուծում է, և մի քանի օրից յետոյ մեռնում է, ինչպէս խորեցյլց։

Այս հիւանդութիւնը թէև սակաւ է պատահում մարդկանց մէջ, սակայն նա համաձարակով տարածում է անասունների մէջ։ Վերջիններա, բռնուելով այդ հիւանդութիւնով, մի քանի ժամում սատկում են։

Հարկաւոր չը համարելով այստեղ սիբիրեան ախտի մասնաւոր և լիակատար ուսումնասիրութիւնը տալ, անգամ մանրէական տեսակէտից, մենք կը բաւականանք միայն հարցի պատմութիւնը գծագրելով։

1850 թւին Ռուայէ և Դաւէնը պատուաստեցին սիբիրեան ախտը անասուններին, սրսկելով նոցա արեան մէջ մի արիւն, որ վերցրած էր ուրիշ հիւանդ անասունների փայծաղից։ Նոքա քննեցին այդ միջոցով սատկացրած անասունների արիւնը և առաջին անգամ նշմարեցին փորրիկ անշարժ ծեղերի գոյութիւնը։ այդ՝ սիբիրեան ախտի բաքտերիաներ էին։ Բայց նոցա գիւտը սահմանափակւում էր միայն այս ֆակտով։ Դրանից յետոյ սիբիրեան ախտի բաքտերիան մնում էր իւանն մի ուրիշ մանրամարմնի հետ, որը միշտ ընկերակցում էր առաջինին։ դա փըտիչ վիբրիօնն է, որը, ինքն ըստ ինքեան շատ

վտանգաւոր լինելով, բոլորովին տարբեր դեր է կատարում, մասնակցելով նեխման գործին։ Մինչդեռ նրա ընկեր սիբիրեան ախտի բացիլը միշտ անշարժ է, — նեխման վիբրիօնը, ընդհակառակը, անդադար շարժւում է շատ բնորոշ կերպով։

1877 թւին Պաստեօրին յաջողուեց բաժանել այդ երկու մանրամարմինները միմեանցից։ նա առանձնացրեց և աճեցրեց բացիլանթրաքը (bacillus anthracis) միայնակ։ Այս ամանը, որի մէջ ցանած էր բացիլը¹⁾, պարունակում էր մի բուլիօն, որը բոլորովին համապատասխանում էր նրա մնունդի պահանջներին։

Այդ, ըստ երեսյթին հասարակ, գործողութիւնը բաւականին մանրակրկիտ բան է։

Բաւական չէ սիբիրեան ախտի բացիլը առանձնացնելու համար գանել բուլիօնի մի փորձուլ, որը նպաստաւոր լինի նրա աճման համար։ անհրաժեշտ էր նոյնպէս և ուրիշ զգուշութիւններ ձեռք առնել, որպէս զի քչացնուի կամ բոլորովին ոչնչացնուի օտար բողբոջների ներկայու-

¹⁾ Առաջին գլխում մենք տեսանք որ Պաստեօրը, գարեջրային խմորի բողբոջումը առաջ բերելու համար փորձեց ցանել սերմը մի հեղուկի մէջ, որը կը մատակարարէր բջիջներին անհրաժեշտ նիւթեր նոցա սընունդի համար։ Ընդհանրապէս այս մեթոդի գործադրութիւնն էր, որ թոյլ էր տալիս այդ գիտնականին պատրաստել զանազան բուլիօններ յատկապէս մի տեսակ մանրամարմին աճեցնելու համար և որը ուրիշ տեսակին պատկանող մանրամարմին վնասակար էր։ Զ.

թիւնը բուլլիօնի մէջ. այդ պատճառով հարկաւոր է ախտահանել ասեղը, որով ցանում են մանրամանմինները բուլլիօնի մէջ, փորձ անողի մատները, անօթը և վերջապէս հիւթերը, որից պատրաստում է բուլլիօնը. նամանաւանդ վերջիններս, որովհետեւ նոցա մէջ մանրէակները արդէն գործում են բազմանալու ամենալաւ պայմաններում:

Առանց մանելու արուեստի մանրամանութիւնների մէջ, մենք այժմ կը բերենք մի օրինակ թէ ինչպէս են մանրէակագէտները (բաքտէրիոլոժիստ) կատարում իրանց փորձերը, գործադրելով Պատեօրի սկզբունքները:

Մենք կը վերցնենք մասնաւոր օրինակներ, որոնք կը հասկացնեն հիմնապէս ընդհանուր մեթոդը:

Հարկաւոր է ցանել ուսումնասիրուող մանրամարմինը նպաստաւոր, սննդարար միջավայրի մէջ. վերջինս պիտի կազմուած լինի արուեստական կերպով փորձ անողի ձեռքով. դա կը լինի, դիցուք, հաւի բուլլիօն՝ հաւի խոլերա զարգացնելու համար:

Ահա թէ ինչպէս են պատրաստում ամենագործածական աճման բուլլիօնը: Վերցնում են բուլորսին լզար միս (տաւարի, թռչունի, ձկան, նայած պահանջին) և լաւ եփում են ու աղ են անում. յետոյ նորա թթւութիւնը ոչնչացնելու համար աւելացնում են սողա: Որպէս զի բուլլիօնը ցրտելուց ամրանայ ժելէի նման, նոյնպէս

և մանրամարմինների յատուկ ձաշակին համապատասխանելու համար յաճախ նրան աւելացնում են ժելատին (ուկորների սառած հիւթը): Քամելուց յետոյ թողնում են որ բուլլիօնը հովանայ մի ցուրտ տեղ, և ահա աճման բուլլիօնը պատրաստ է:

Հովացնելուց յետոյ անկասկած բուլլիօնի մէջ ապրում են մեծ քանակութեամբ մանրէակներ, որոնք պատրաստ են սկսելու իրանց գործը: Հարկաւոր է նոցա ոչնչացնել, այսինքն ախտահանել (stériliser) աճման շրջավարը.

Նախ և առաջ բաժանում են ժելատինը փոքրիկ խողովակածեւ ամանների մէջ կամ տարածում են փոքրիկ ապակեայ ափակների մէջ, նայած թէ ինչ ձեռք են ուզում աճեցնել գաղութները:

Վերցնենք օրինակ խողովակածեւ ամանները: Նոցա բերանները փակում են մաքուր բամբակէ խցաններով և ամբողջը ենթարկում են ջրի գուրշի ազդեցութեան: Այդ տաքութիւնը կոտորում է բոլոր մանրէակներին, որոնք կարող են գտնուել ամանների, բամբակի կամ բուլլիօնի մէջ:

Բայց բաւական չէ եռացող ջրի գուրշի տաքութիւնը, որպէս զի կոտորուեն բոլոր կենդանի սերմերը. գորա համար հարկաւոր է աւելի զօրեղ տաքութիւն. այդ ստացում է այնպէս, որ գուրշին ենթարկում են ճնշման, որի հետևանքը լինում է ջրի տաքութեան բարձրանալը:

Այն մեքենան, որի մէջ ախտահանում են ա-

ուարկաները, ենթարկելով նոցա տաքութեան և
ձնշման ազգեցութեան, անւանւում է աւտոկլաւ:

Դա մի մետաղեայ կաթսայ է, որի խուփը
ամուր ծածկուած է և որը օժտուած է ապահովու-
թեան խթանով և ջերմաչափով:

Փորձը ցոյց է տուել որ 115° աստիճանում
(Յելսիուսի ջերմաչափով) բոլոր մանրէակները
կոտորուում են:

Բայց չի կարելի ախտահանել այդպիսի բարձր
աստիճանի տաքութեամբ այսպիսի առարկաներ,
որոնք լուծուում են կամ գոլորշիանում են 115°-
ից ցած. դոցա համար հարկաւոր է դիմել ուրիշ
միջոցների, որոնց մասին մենք չենք խօսի, քա-
նի որ անհրաժեշտ կը լինի մտնել մանրամաս-
նութիւնների մէջ:

Դիցուք ամանները հանած են աւտոկլավից.
Նոքա ախտահանած պատրաստ են: Բամբակը ինչ-
պէս փորձը ցոյց է տալիս, չի թողնում անցնել
իւր միջից մանրամարմինները, որոնց տարածում
է օդի փոշին: Յրտեցնելուց յետոյ կուսական միջ-
նավայրը պատրաստ է ընդունել և աճեցնել այն
մանրամարմինները, որոնց մենք ուզում ենք այն-
տեղ աճեցնել:

Ենթագրենք թէ հարկաւոր է ուսումնասիրել
սիրիեան ախտի բացիլիներին և այն թէ բուլ-
լիօնը, որ գտնուում է ամանում համապատաս-
խանում է այդ միկրոբի պահանջներին, թէ ոչ:

Փորձ անողը վերցնում է մի բարակ լոնոս-
կեայ ասեղ և անց է կացնում նորան մի քանի

անգամ ալկոհոլի (սպիրտի) ճրագի բոցի միջով.
այդ տաքութեան մէջ այն մարմինները, որոնք
կարող էին գտնուել ասեղի վրայ, այրւում են:
Ասեղը խկոյն հովանում է: Զգուշութեամբ ա-
սեղի ծայրը մտցնում են պտուկի մէջ (սիբիր-
ախտի), ժելատին պարունակող խողովակածկ ա-
մանը բացում են, աշխատելով չկպչել մատնե-
րով բամբակի այն մասին, որը ծածկելու է ա-
մանի բերանը: Ասեղի ծայրը խկոյն խրում են
ժելատինի մէջ ցածից դէպի վերև, որ ասել է
թէ ամանը պիտի պահած լինի վլխիվեր: Սառած
ժելատինը իւր թանձրութեան շնորհիւ չի թափ
ւում ամանից, և այս դէպքում օդի փոշին դր-
ւարութեամբ է մտնում խողովակի մէջ: Ամանի
բերանը կրկին ծածկում են բամբակէ խթանով և
գնում մի ապահով տեղ, եթէ այդ տեղի տաքու-
թիւնը բարեյաջող է, մանրամարմինները, որոնք
վերցրած են ասեղով պտուկի միջից, կը գար-
գանան և շուտով կը կազմեն ժելատինի մէջ մի
գաղութ, որ բաղկացած կը լինի անթիւ սիբիր-
ախտեան բացիլիներից:

Եւ այդ գաղութը ամբողջապէս կ'ունենայ
միենոյն ձեր բոլոր ամանների մէջ, ուր ցանած
է միենոյն բացիլլը և ուր գտնուում է նոյն բուլ-
լիօնը: Եւ այդ ձեր կը լինի բնորոշ: Նա կը սո-
վորցնէ մեղ բազմաթիւ գաղութների մէջ ճանա-
չել բացիլլանթրաքսի գաղութը:

Աւելացնենք որ այն ժամանակ, երբ գա-
ղութները զարգանում են մաքուր բուլլիօնի մէջ,

վերջինս ենթարկւում է փոփոխութեան՝ ոչ միշտ այն քիմիապէս, քանի որ նա մնուցանում է մանրէակներին աճանան ժամանակ, այլ և ֆիզիկապէս։ Աճող բաքտերիաների տեսակին համաձայն ժեշտափնը կամ պղտորւում է, կամ հեղուկ է դառնում և այն, և որքան նշանաւոր ցուցմունք է դա փորձ անողի համար, դորա շնորհիւ վերջինս կարողանում է ճանաչել մանրէակների տեսակը։

Կան և ուրիշ միջոցներ մանրէակները աճեցնելու համար, բայց նորա մեծ մասամբ վերը բերած ձեր զանազան փոփոխութիւններն են ներկայացնում։

Մենք կ'աւելացնենք նորան մի քանի նկատողութիւններ միայն սառն ախտահանութեան վերաբերեալ, որի ամենապարզ տեսակը գտնեն է։ Զտելը դործագրուում է օրինակ այն դէպքում, երբ հարկաւոր է ախտահանել մի բուլիօն, որը չի կարող դիմանալ տաքութեան ազդեցութեան առանց փշանալու։

Ամենագործածական դտիչը այժմ Շամբերլանի¹⁾ դտիչն է, որը նման է մի ծակոտիկաւոր հողէ մոմի, որի պատրոյկի տեղը դատարկ է, միայն ներքեւ ծայրը բոլորովին փակ։ Այդ մոմը ամրացրած է մի ուրիշ ամանի մէջ, բայց այնպէս որ նորա բերանը մնում է դուրս. զտող հեղուկը ամանի միջից յայտնի պայմաններում

¹⁾ Շամբերլան, ֆրանսիացի գիտնական, Պատեօրի աշխատակիցներիցն է։

անցնելով մոմի պատերով դուրս է դալիս նրա բերանից բոլորովին զտուած։ Ահա ընդհանուր գծերով դտիչի գաղափարը։

Սակայն նորից վերադառնանք սիբիրեան ախտի բարտերիային։ Մենք նորան տեսանք առանձնացրած Պատեօրի ձեռքով ժելատինի բուլիօնի մէջ, որը թոյլ էր տալիս գիտնականին աճեցնել նրանց կատարեալ ընտանիական կերպով։ Յետոյ Պատեօրը ապացուցեց որ այդ աճելի բացիլիները ծերանալով կորցնում են իրանց թունաւորութիւնը և, երբ նոցա թունաւոր զօրութիւնը նուազել է, եթէ նոցա մտցնենք այն անսառնների արեան մէջ, որոնք ընդունակ են վարակուելու սիբիրեան ախտով (ինչպէս եզները և ոչ խարները)՝ վերջիններս այնուհետև ազատ են լինում այդ սոսկալի հիւանդութիւնից։ Կենդանիները պատուաստուած են։ Տեսնում էք թէ ի՞նչ ահագին ծառայութիւն է գիւղատնտեսութեան և ամբողջ մարդկութեան համար Զէնների գիւտի (ծաղկի պատուաստումի) այդ խելացի գործադրութիւնը։

Բաքտերիական թոյն ինուազեցումը, որը թոյլ է տալիս պատուաստել, առաջին անգամը գործադրեց Պատեօրը հաւերի խոլերայի դէմ, ցոյց տալով այդպիսով այդ պատուհասի դէմ կուելու միջոցը։

Ահա այդ գիւտի և փոքրիկ անսառնների վրայ նորա յաջող գործադրութեան շնորհիւ էր, որ Պատեօրը արժանացաւ ազգի երախտագիտութեան։

Այդ մեթոդը զարգանալով հետևյաց շների կատաղութեան և նրանց կծածի դէմ արած գիւտը, կատաղութիւն որի մանրէակային ծագումը գեռ ճշտիւ ապացուցուած չէ: Պաստեօրի նշանաւոր աշխատակիցների օգնութեամբ, Ռու և Շամբերլան, և նրան հետևող փառաւոր աշակերտների շնորհիւ, ինչպէս պ. պ. Դիւկլօ, Շանտմես, Գրանչէ, Ստրօա, Դիւրէօք և Լըսաժ, և այլք, նոր ուղղութեամբ արած գիւտերը արագութեամբ բազմացաւ թրանսիայում և ուրիշ երկիրներում:

Պաստեօրի առաջին ինստիտուտը հիմնուած է Պարիզում: Նա բացուած էր մասնաւորապէս կատաղած շան կծած հիւանդների համար, և այդպիսի աշխատութիւններին վերահաս էր ինքը ուսուցչապետը:

Յիշենք այստեղ անցողաբար և փառաբանենք մի հերոսի յիշատակ, որին այս նոր գիտութիւնը նահատակեց փառաւոր մահով:

Դա երիտասարդ Լուի Թիւլիէն է, որը հազիւ գուրս եկած բարձրագոյն գալոցից, մեռաւ եղիպտոսում խոլերայից, որը նա գնացել էր այնտեղ ուսմանաիրելու, որովհետև այնտեղ այդ ժամանակ շատ սաստիկ տարածուած էր յիշեալ հիւանդութիւնը:

Ախտահան միջոցները գործ են կնում ոչ սիայն գիտնականները իրանց աշխատանոցներում

մանրէաբանական աշխատութիւնների համար, որպէս և խիրուրգները ու բժիշկները, այլ նորքա գործադրուում են նոյնպէս և աւելի մեծ ծաւալով փողոցները և զանազան առարկաներ ախտահաննելու համար համաձարակի ժամանակ, կամ նոյնպէս հիւանդների առողջանալուց կամ մահից յետոյ ախտային սելմերը կոտորելու համար:

Այդ միջոցների գործադրութիւնը այնքան պարզ և հասարակ է որ հեշտութեամբ կարելի է տարածել քաղաքներում և գիւտերում և, մանաւանդ, սովորեցնել ուսումնարաններում:

Ախտահան միջոցների մէջ, ինչպէս առաջ էլ ասացինք, սուլեման և կարբուեան թթուն գլխաւոր տեղն են բոնում: Մենք օգտակար ենք համարում առաջ բերել այստեղ ախտահանների մի փոքրիկ ցուցակ յայտնի կարգով:

I Ամենաուժեղ ախտահաններ.

	գրամմ.	գր.մ.	ջրի համար
Սուլեմա (Hydrargyrum bichloratum)	0,07	1000	
Բորակաթթուային արծաթ (argentum nitricum)	0,08	"	

II Շատ ուժեղ ախտահաններ.

Եօդ	0,25	"
Ծծմբաթթուային պղինձ (cuprum sulfur.)	0,90	"

III Ուժեղ ախտահաններ.

Երկ-խրոմային կալի (kalium bichromicum)	1,20	"
Խլորային ցինք (Zincum chloratum)	1,90	"
Թիմոլ (Thymolum)	2,0	"
Կարբուեան թթու	3,20	"

Կալի հիպերմանգանիք (kalium hypermang.)	3,50	»
Պաղեղ (շապ, alun, бура)	4,50	»
Տաննին	4,80	»

Վերջապէս կան և ուրիշ ախտահաններ, ուրոնք շատ թոյլ են. ինչպէս օրինակ բորիքային թթու (acid. boricum) (7,50¹⁾ , սալիցիլային նատր (natr. salicylicum) 10,0), ալկոհոլ (95,0), ծովային աղ (165,0), գլիցերին (225,0):

Ախտահանների գործադրութիւնը շատ պարզ է: Հարկաւոր է լուծել նոցա տաք ջրի մէջ այն քամուակութեմբ, ինչպէս ցոյց է տուած վերել բերած ցուցակի մէջ, օր. 2 զրամմ խլորային ցինք 1000 զրամմ (մի լիտր) ջրի մէջ, և այդ հեղուկով լուանալ ախտահաններու առարկաները: Վերջին դործողութեան համար հնարած են զանազան տեսակ մեքենաներ (պուլուերիզատորներ), որոնցով փշում են ախտահան հեղուկը ախտահանելի առարկաների վրայ:

Այս տեսութիւնը անկատար կը լինէր, եթէ չխօսէինք յայտնի գաղերի աղդեցութեան մասին, ինչպէս և ֆիզիքական աղդեցութիւնների մասին՝ ցրտի և տաքութեան:

Բորակային կամ խլորային թթուի գոլորշին, խլորը կամ ծծմբային թթուն—այդ բոլորը փորձուած ախտահան գաղեր են:

Միմիայն ծծմբային թթուն, որը ստացւում է ծծումբ այրելուց, գործադրուել է հին ժամանականութիւնը մի լիտր ջրի մէջ լուծուած:

¹⁾ Փակագծում գրած թուերը ցոյց են տալիս ախտահանների քանակութիւնը մի լիտր ջրի մէջ լուծուած:

Նաևիներում, երբ գեռ մանրէակների գոյութիւնն անգամ չէին կասկածում. ծծմբային գոլորշին գործ էր ածւում օդի մաքրութեան համար: Աղիսկար մաքրեց արքունիքը կոտրածից յետոյ, այրելով ծծումբ (Ողիսսական, երգ XI): Օվկիոնը ասաց հովիւներին. «Երսկէք մաքրութեան ջուր ոչխարհների վրայ և այրէք ծծումբը կապոյտ բոցի մէջ» (Fastes, գլ. IV):

Պինիոնը պատմում է որ Միլոյում մի քառայր կար, որտեղից դուրս էր գալիս ծծմբային գոլորշի և թէ բնակիչները՝ լահցացնում էին նորա մուտքը համաճարակի առաջն առնելու համար:

Ծծմբային թթուն, իսկապէս, փառաւոր կերպով մեղցնում է կեանքը և, ինչպէս ախտահանիչ, նորա ոյժը յատկապէս ապացուցուած է Դիւժարդէն-Բոմէտցի փորձերով: Այս գաղը նոյնպէս շատ յաճախ գործ է ածւում նաւերի, անկելանոցների և բանտերի ախտահանութեան համար:

Նորա գործադրութիւնը շատ հասարակ է: Հարկաւոր է դիցուք ախտահանել մի սենեակ: Սենեակի բոլոր լուսամուտները լաւ գոցերով վերցնում են կրակ սի ամանի մէջ, և դընում են սենեակի մէջտեղում և կրակի վրայ ցանում են բաւականաչափ ծծմբային փոշի: յետոյ, սենեակից դուրս գալով, լաւ փակում են դուռը: Ծծումբի գոլորշին այսուհետեւ կը կատարի իւր գործը, մտնելով պատերի, առաստաղի, յատակի բոլոր ծակ ու ծովկերը և սպանելով այնեղ թագնուած մանրամարսիններին: Նա ախ-

տահանում է նոյնպէս և զանազան կահ-կարասիներ և շորեր առանց փչացնելու նրանց:

Այժմ մի քանի խօսք ֆիզիքական դործուների մասին: Մանրամարմինները դիմանում են շատ ցած աստիճաններին (110 աստիճանի): Ցուրտը կանգնեցնում է մանրէակների աճումը, բայց նոցա չէ սպանում:

Տաքութիւնը, ընդհակառակը, ինչպէս մենք ասացինք այս գլխի ընթացքում, ամենահաստատ ախտահամ միջոցներից է և նա յայտնի է եղել հին ժամանակներում: Մովսէսը կրակ էր տալիս վարակիչ բնակարանները:

Ճշգրիտ փորձերը ցոյց են տուել որ 100° (Յելսիուսի ջերմաչափով, որ հաւասար է 80° Ռէօմիւրի) խոնաւ տաքութիւնը (Եռացող ջրի գոլորշին) բաւական է որ վասնգաւոր բողբոջները կոտորուեն: Այստեղից գործնական եղանակացութիւն, որ կասկածաւոր հեղուկը խմելու համար գործադրելուց առաջ հարկաւոր է եփ տալ: Բայց չոր տաքութեան մէջ մանրամարմինները կոտորուում են սիայն 140 աստիճանում:

Այս գուտիսը մենք կը վերջացնենք կրկին առաջ բերելով Դիւժարդէն-Բոմեացի կաքծիքը ախտահանութեան մասին:

«Միակ ախտահանը, ասում է յիշեալ հեղինակը, խոնաւ տաքութիւնն է, երբ նա համում է 110-ից մինչև 115 աստիճանի (Յելսիուսի). Բայց քանի որ այս տաքութիւնը չի կարելի գոր-


ծագըել այն բոլոր պարագաներում, երբ ախտահանութիւնը անհրաժեշտ է, ուստի հարկաւոր է դիմել հեղուկային և զազային ախտահանների, հեղուկ ախտահանների մէջ առաջին տեղը բըռնում է սուլեման, որը անզուգական է, յետոյ ծծմբային պղինձը, գազային ախտահանների մէջ ամենալաւն են ծծմբային թթուն և խլորը»:

Դ.

ՄԱՆՐԿԱԿՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԸ

Քարտերիսներ.—Նոյտ զիսաւոր տեսակները.—Խնբնաբեր ծագում:

Մենք համարեա վերջացըրինք, շատ կարճառուտ կերպով, մանրամարմինների վերաբերեալ



Պաստեօրի կատարած գործերի տեսութիւնը. Բայց ընթերցողի մտքում մնաց մի չը պարզուած

կէա՝ թէ ի՞նչ բնութիւն ունեն իրանք, այդ
անսահման փոքրիկ էակները, որոնք ամբողջ բնու-
թեան մէջ առաջնակարգ դեր են խաղում:

Մենք սկզբում խօսեցինք ալկոհոլային, քա-
ցախային, կաթնային, իւղային և աւշային խմո-
րումների մասին և փայլը նմանեցրինք խմոր-
ման. սիբիրախտի մանրէակը մեզ տարաւ դէպի
բժշկական խորհրդածութիւնները:

Դործող մարմինը մենք անուանում ենք եր-
բեմն խմոր, կամ խմորիչ, կամ միկրոկոկ, կամ
բացիլ, իսկ մանրէակ անունը համարեա թէ
չէինք դործ ածում:

Արգեօք հետաքրքրական չի լինի մի գաղա-
փար տալ նորա մասին թէ ի՞նչ տեղ են բռնում
այս մանրէակները կենդանիների երկար շըդ-
թայում:

Նոցա բնական պատմութիւնը դեռ ևս բա-
ւականին մութ է. սակայն մի քանի կէտեր ար-
դէն պարզուած են:

Նոքա պատկանում են ստորակարգ բոյսերի
մի խմբի, որը կոչւում է բակտերիային խումբ:

Բաքտերիային խումբը կարելի է բաժանել
հետեւալ հասարակ մասերի.

1. Միկրոկոկներ (մանրակէտներ),
2. Բաքտերիաներ (յատուկ անուն),
3. Բացիլներ (ցուպիկներ),
4. Սպիրիլներ:

Խմորները, ինչպէս մենք ասացինք առաջի
գլխում, պատկանում են ստորակարգ սունկերի
խմբին (thécapores):

Մանրակէտները կոլորակ են, բաքտերիա-
ները—երկարաձեւ, վերջնիներս բռնում են ման-
րակէտների և ցուպիկների (բացիլ) մէջ տեղը.
Նոցա ծայրերը շատ ժամանակ լինում են ուռած
և շարժուն. ցուպիկները, ինչպէս ցոյց է տալիս
նոցա անունը, շատ աւելի երկար են քան լայն,
զլանաձեւ են, սպիրիլները նման են զալարուն
թելի և անդադար շարժուում են:

Այսքան էլ ճէշտ չէ լինում ամեն անգամ
որոշել մանրէակների կարգը նոցա ձևերի հիման
վրայ: Կան որոշ ձևեր, որոնք անցողական միջին
տեղն են բռնում:

Ահա մի քանի օրինակներ վերցրած մանր-
էակների ասեն մի խմբից, որոնցից մի քանիսը
զնասակար են, իսկ մեծ մասը անժնաս:

Կատաղած անասունների արեան մէջ գտըն-
ուում են հատ հատ մանրակէտներ անջատուած,
բայց այդ մանրէակը չէ վարակիչ տարրը:

Շատ զէպքերում մանրամարմինների վնասա-
կար գործոնը ապացուցուած չէ:

Այդ էակները, բոլոր կենդանի մարմինների
նման, արտաթորում են կամ արտազրում են ար-
դիւնքներ, որոնք երբեմն մնում են մարմնի մէջ
մանր էակների անհետանալուց յետոյ էլ. դոքա
երբեմն վերին աստիճանի թունաւոր են և մար-
մինը ենթարկում են վերջնական կորուստի: Նո-

քա շատ նման են փտութեան մանրէակների արտադրած արդիւնքներին և նոյնքան էլ թունաւոր են: Վերջիններս կոչւում են պտումայիններ և գոնուում են հին դիակների մէջ, շատ թունաւոր են և այնքան նենգաւոր որ անցնում են զտիչի միջով:

Յաճախ շատ դժուար է լինում բաժանել բակտերիաների արտադրած գործոն հիւթը իրանց բակտերիաներից: Սակայն ֆակտերի մի յայտնի քանակութիւն ապացուցանում է որ բաքտերիաների առանձնակի ներգործութիւնը և նրանց արտադրած արդիւնքի ներգործութիւնը տարբեր գործոններ են, և եթէ յայտնի մանրէակներ պատրաստում են պտումայիններ, ընդհակառակը, կան և այնպիսինները, որոնք անձամբ թունաւոր լինելով հանգերձ, արտադրում են անվնասակար նիւթեր. այդպէս օրինակ այդչափ թունաւոր սիրեր-ախտի բաքտերիայի արտադրած հիւթը կարելի է անպատճի կերպով սրսկել անասունների արիւնի մէջ (Պաստեօր):

Յաճախ զատ-զատ մանրէակներ կարող են համախմբուել մի զաղութի մէջ, ինչպէս աստղերը մի համաստեղութեան մէջ: Այդ մանրէակների համախումը կոչւում է զօօղի: Այդ դէպքում միենոյն զօօղի մանրամարմինները խառնուած են իրար իրանց արտադրած արդիւնքի մէջ, որը կապում է մէկը միւսին: Կան մանրակէտների, ցուպիկների, բաքտերիաների կամ վիրուսների (թրթռուկ) զօօղիներ:

Յիշենք այստեղ մանրակէտների շարքում ուկեզոյն բարախածին ստամիլոկոկը (staphylococcus pyogenes aureus), որը զարգանում է «չորանի» թարախի մէջ, կամ որովայնաթաղանթի բորբոքման թարախի մէջ. եթէ դա սրսկենք անասունին՝ կ'առաջանայ մահացու թարախային հիւանդութիւն:

Զարմանալի մանրակէտը (micrococcus prodigiosus) ահազին գաղութներով զարգանում է օպային մարմինների վրայ (բրինձ, օսլա և այլն), որոնց նա ծածկում է պայծառ կարմիր գոյնով, նման արեան բծերին:

Խարեւած մանրակէտը ձիու աղբին տալիս է ժանղի գոյն:

Ախտաբեր մանրէակների մէջ յիշենք նոյնպէս կարմիր քամու (րօյա) միկրոկոկը և դիֆտերիտի շղթայանման մանրակէտերը. Վերջին հիւանդութեանը խառնուում է մի բացիլլ և:

Հաւերի խոլերան բնորոշուում է ցուպանման բաքտերիաներով, որոնք երբեմն գրկախառնուելով երկու-երկու՝ նմանում են 8 թուանշանին. նորա երբեմն կարող են միանալ մանրակէտների հետ:

Իրեւ ցուպիկների օրինակ բերենք կապտածին ցուպիկը (bacillus cyanogenus) կամ կապոյտ կաթի ցուպիկը:

Յայտնի ճահիճների փրփուրը վարդի գոյն է ստանում կարմրացնող բաքտերիաների շնորհիւ (bacteridie rubescente), որոնք ունին հասած դեղձի կաշուի գոյն:

Սիրիակախտի, փորհարինքի, խոլերայի, բարակացաւի, զիֆտերիտի մանրէակները—բոլորը ախտաբեր ցուպիկներ են:

Դարձահարինքի (возвратный тифъ) մանրէակը սպիրիլ է:

Մենք այսուեղ առաջ բերինք ախտաբեր և ոչախտաբեր մանրէակներից ամենայայտնիները, չը յիշելով սակայն յայտնիներից նոցա, որոնք տարածուած են օդի, հողի և ջրի մէջ:

Վերջացնենք մեր խօսքը սի փոքրիկ նկարագրով. ինքնաբեր ծագման մասին, որը Պատեօրի փառաւոր գործերից մէկն է: Դա մի հրաշալի օրինակ է նորա փորձերի անաչառ խստութեան մի հարցի վերաբերեալ, որ գիտական փիլոսոփիայութեան ամենայուզիչ խնդիրներից մէկն է:

Ըսթերցողը գուցէ գիտէ հոսմէտական հին աւանդութիւնը Արիստէ հովուի մասին¹⁾, երբ նա աստուածներին ազօթելուց յետոյ յանկարծ նկատեց որ իւր սատկած անասունների շուրջը թրոչկոտում են մեղուների պարքեր, որոնք ինքնաբերաբար գոյացել էին դիակների մոի մէջ:

Այսպէս բանաստեղծական կերպով արտայայտած այս միտքը ներկայացնում է մի գիտական գաղափար, որը յայտնի ուսուցչապետ Վան Հելմնտը ձևակերպում է աւելի կտրուկ կերպով այսպէս. «վերցրէք, ասում է նա, մի կեղոսոտ շապիկ, դրէք նրա մէջ ցորենի հատիկներ, պա-

հէք բոլորը մի տաք տեղ և գուք մի քանի ժամանակից յետոյ կը տեսնէք, որ ցորենը դառել է մուկ»:

Այդ գաղափարը, որ իբր վերին կարդի անասունները կարող էին գոյանալ ամեն մի պատասից, չը կարողացաւ դիմանալ գիտական ամենահասարակ ընդգիւմադրութեան. այս հողի վրայ արած վիճաբանութիւնները վերջիվերջոյ հանգան այն եզրակացութեան, որ կենդանի մարմիններ չեն կարող ինքնաբերաբար գոյանալ:

Երկու գիտնականների, Պատեօրի և Պուշէի միջև ծագեցան վիճաբանութիւններ ինքնաբեր ծագման մասին: Պուշէն արաւ մի փորձ, որը նա համարում էր վերջնական և ապացուցիչ. այդ փորձին Պատեօրը պատասխանեց մի հակառակ փորձով, որը կատարելապէս ոչնչացրեց նրա հակառակորդի եզրակացութիւնները:

Պուշէն վերցրեց մի ապակեայ զանգակ և, լցնելով նրան սնդիկով, ապա պարանեց մեծ ափսէի մէջ, որը նոյնպէս պլարունակում էր սնդիկ. յետոյ զանգակի մէջ նա լցրեց բորակածին և թթուածին այն համեմատական չափով, ինչպէս այդ երկու գաղերը գտնուում են օդի մէջ: Տաքացնելով օդը մինչև 100° (Ցելս.), նա մտցրեց նրա մէջ սնդիկի միջով չոր խոտ: Մի յայտնի ժամանակից յետոյ խոտի մէջ զարգացան մանրամարմիններ: Սորանից Պուշէն եզրակացրեց որ վերջիններս զարգացել են ինքնաբերաբար:

Բայց Պատեօրը ապացուցեց որ մանրամար-

¹⁾ Գիրզիլիս Հայուերգոթին, երգ IV:

մինների բողբոջները գտնուել են անդէկի մէջ, և
որ խոտը, անցնելով վերջինիս միջով, ընդունել
է այդ բողբոջները:

Յետոյ նա արաւ մի շարք ուրիշ փորձեր,
ուր գործադրուած էին ամենախիստ նախազգու-
շութիւններ, որպէս զի չը մնայ ոչ մի բողբոջ
ոչ բուլիօնի մէջ, ոչ օդի մէջ, և ապացուցեց ա-
ռանց որ և է գժուարութեան, որ ախտազուրկ
(sterilisé) միջավայրում չի կարող ծագել ոչ մի
մանրամարսին, եթէ այդ միջավայրը բաժանուած
է ազատ օդից թէկուղ ախտազուրկ բամբակով:

Զանազան տեսակ բուլիօններ ապակեայ ա-
մանների մէջ ախտահաննելով և վերջիններիս բե-
րանները կրակով կպցնելով՝ նա պահեց տասը-
քասն տարի և ոչ մի մարմին չը զարգացաւ նո-
ցա մէջ: Բայց հէնց որ բաց արին նոցա բերան-
ները, ազատ օդը, ներս մաննելով ամանների մէջ,
փոշինների հետ ցանեց բուլիօնների մէջ սեր-
մեր, և զարգացան մանրամարմինների գաղութներ:

Ուրեմն մանրամարմինները զարգանում են
ոչ թէ ինքնաբերաբար, այլ յայտնի սերմերից
(սպորներից):

Օ ԹԻ ՓՈՇԵՒ

Մթնոլորտային օդի մէջ, բացի զանազան
գազային բաղադրութիւններից, գտնուած են և
անթիւ մասր-մունր մարմիններ, որոնք իրանց
անշափ փոքրութեան և թեթևութեան շնորհիւ
միշտ լողում են օդի մէջ:

Մեր նպատակն է մի թեթև ծանօթութիւն
տալ ընթերցողներին օդի այն մարսինների բնու-
թեան մասին, որոնք սովորաբար թող կամ փոշի
անունով են յայտնի: Այդ փոշու մէջ կան ան-
կենդան ու բոլորովին անվտանգ մարմիններ, ո-
րոնց մասին մեր ասելիքը կարձ կը լինի. և, ընդ-
հակառակը, կան կենդանի մարմիններ, որոնք
Պատեօրի ուսումնասիրութիւններից յետոյ ստա-
ցել են շատ մեծ նշանակութիւն առողջապահա-
կան տեսակէտից:

Այժմ լիովին ապացուցուած է, որ բոյսերի,
անասունների և մարդկանց մէջ տարածուած հի-
ւանդութիւնների մեծագոյն մասը առաջ է գա-
լիս զանազան սունկերից, որոնք գտնուած են օ-
դի մէջ և արա միջոցով էլ տեղափոխուում են եր-
բեմն շատ հեռաւոր տեղեր:

Օդի փոշին կամ թողը՝ օդի մէջ լողացող փոքրիկ մասնիկներն են: Այդ մասնիկները որքան փոքր են, այնքան աւելի կամաց ես ընկնում գետինը: Ամենամանը մասնիկները երկար ժամանակ մնում են օդի մէջ և չեն նկատում սովորական պայմաններում: Եթե մութ սենեակում մի ծակից արեի ճառագայթները ընկնում են ներս, այդ լուսաւորուած սինի մէջ երևում են օգում լողացող բազմաթիւ մանր-մունը մասնիկներ:

Թողի քանակութիւնը օդի մէջ կախուած է, տուածինը օդի շարժումից (քամինեից), որ վերցնում է գետնից մեծ ու փոքր մասնիկներ և տանում երբեմն շատ հեռաւոր տեղեր, երկրորդը՝ հողի մակերեւոյթի դրութիւնից:

Ուրիշ հաւասար պայմաններում շատ թող է լինում այստեղ, ուր կլիման չորային է, բուսականութիւնը՝ բացակայ է, կամ շատ քիչ է, և հողի վերևի շերտը կազմուած է կաւային զանազան մանր մասնիկներից: Այդ դրութեան մէջ է օրինակ Բագուն: Օդի չորութեան պատճառով այդ մասնիկները ջրով կապուած չեն իրար հետ և քամին հեշտութեամբ նրանց քշում տանում է ուրիշ տեղեր: Եթե հողը թաց է, ջուրը պահում է հողի մանր մասնիկները և երբեմն թող էլ չի կարողանում գոյանալ: Բոյսերի շատութիւնը նոյնպէս նպաստաւոր չէ թող գոյանալուն. առածինը, որ նրանք ստուերով պահպանում են հողի խոնաւութիւնը, երկրորդ պաշտպանում են նրան քամուց:

Մթնոլորտային թողը ուսումնասիրելու համար գոյութիւն ունեն զանազան գործիքներ, որոնք աէրօսկօպ անունն են կրում: Նրանք հիմնուած են այն սկզբունքի վրայ, որ օդը անցնելով գործիքի միջով, նրա մասնիկները բռնւում են գործիքի մէջ մի որեիցէ բանով: Թողի քանակութիւնը որոշելու համար օրինակ գործ է ածւում ի միջի այլոց հետեւեալ ձևը: Օդի մի որոշ ծաւալ անց են կացնում ապակեայ խողովակի մէջ դրած և նախաղէս 100° C. տաքութեան մէջ չուրացրած բամբակի միջով, բամբակի քաշի տարբերութիւնը փորձից առաջ և յետոյ ցոյց է տալիս թողի քանակութիւնը: Մանրագիտակով քննելու համար օդը անց են կացնում քաշած ջրի (distillé) միջով. այդ ձևով ջրի մէջ պահում է թողը, այնուհետև քննելով մի կաթիլ ջուրը մանրագիտակով, մենք կը տեսնենք նրա մէջ պարունակուող թողի մասնիկները:

Փողոցի փոշին բաղկացած է գլխաւորագէս այն սիւթից, որոնցով ծածկուած են փողոցները և բագերը, —աւազ և կիր, —բացի այդ պատահում են ձիու կղկղանքի մասնիկներ, ածուխի կտորներ, երկաթի մասնիկներ, զանազան գործուածքների թելեր, զանազան անսատնների մագերի կտորներ, օվլայի և ծաղիկների սերմեր և այլն: Ամեն տեղ օդի մէջ գտնուում են և աղի մասնիկներ, որոնք երեկի ծովային ջրերի գոլովիների հետ տարածում են օդի մէջ:

Մթնոլորտային թողի մանրագիտական բա-

դադրութիւնը թոյլ է տալիս համարեա միշտ ուրոշել։ Արդեօք փոշին գիւղի է, թէ քաղաքի, սենեակի է թէ փողոցի. — դա կարելի է որոշել այն մասնիկներից, որոնք գանւում են նրա մէջ։ Բնակարանների օդը, պարունակելով իր մէջ մեծ քանակութեամբ գործուածքների թելեր, որոնք պոկւում են շորերից, վարագոյններից և այլն, հեշտութեամբ զանազանուում է գիւղական օդից, որ ազատ է գրանցից։ Քաղաքի փողոցների օդի մէջ թէև նոյնպէս մասամբ գտնուում են գործուածքների թելեր, բայց նրա մէջ էլ գերակըշուում են քարի և հողի մասնիկները, որոնցով ծածկուած են փողոցները։ Գիւղական օդի մէջ աչքի են ընկնում զանազան բուսական և կենդանական մասնիկներ, որոնք պոկւում են բոյսերի և անասունների վրայից. տերեկի կամ փալտի կտորներ, ծաղիկի սերմեր, անասունների մազերի և վերնամաշկի կտորներ և այլն։

Բացի անգործ (inerte) մարմիններից մըթնոլորտի օդի մէջ գտնուում են և գործարանաւոր մարմիններ (organisé). Տաղիկների փոշի ու սերմեր և սունկերի սերմեր կամ սպորներ։

Տաղկափոշինները որոշ տեսակ բոյսերի արական գործարանների արտադրութիւններն են և ծառայուում են բոյսերի իգական սերմերի բեղմաւութեան համար։ Դրանք շատ տարածուած են լինում. գարնանը և ամառը, երբ նրանց թիւը մի խորանարդ մետք օդի մէջ համուում է երբեմն 10,000։ Աշնանը և մանաւանդ ձմեռը նրանց թիւ-

ըլ շատ պակասում է։ Փակուած օդը պարունակում է աւելի քիչ ծաղկափոշի, քան ազատ օդը։

Շատ բոյսերի սերմեր այնքան մանր են, որ իրանց մեծութեամբ ծաղկափոշուց չեն տարրերւում։ Այդ տեսակ բոյսերի սերմերը միաբջիջ են և կոչում են սպօր։ Այդպէս են, օրինակ՝ բորբոս սունկի սպօրները, որոնք մանրաղիտական բշտիկներ են. ընկնելով թաց տեղ, այդ սպօրները սկսում են թելեր արձակել ու երկարել. Այդ թելերը, որոնք հիփ (hypthes) անունն են կրում, ունեն զարմանալի յատկութիւն՝ ներս մտնել այն մարմինների մէջ, որոնց վրայ սունկերը ապրուում են պարագիտի պէս։ Նրանք կարող են մտնել ատամնների ոսկորների մէջ էլ։ Այդ թելերի մէջ են գոյանում բորբոսի սպօրները, որոնք դուրս պլրծնելով իրանց մայրական մարմնից ցըւում են օդի մէջ և գարձեալ ընկնելով նպաստաւոր պայմանների մէջ, ծլում են ու «բորբոսով» ծածկում, օրինակ հացը, պանիրը, իւղը և այլն։

Կան այնպիսի սունկեր, որոնք յայտնի են իբրև զանազան խմորումների գործօններ, բայց սենք ուղղակի կ'անցնենք այն տեսակներին, որոնք ապրում են բոյսերի և անասունների վրայ և առաջացնում են նրանց մէջ զանազան հիւանդութիւններ։

Uredo մի սունկ է, որ աճում է ցորենի վրայ Peronospora infestans, կամ գետնախնձորի հիւանդութեան սունկեր, զարգանում են չափազանց խոնաւութիւնից և երևում են

զաղրութիւնը թոյլ է տալիս համարեա միշտ ո-
րոշել: Ալդեօք փոշին գիւղի է, թէ քաղաքի,
սենեակի է թէ փողոցի.—դա կարելի է որոշել
այն մասնիկներից, որոնք զանւում են նրա մէջ:
Բնակարանների օդը, պարունակելով իր մէջ մեծ
քանակութեամբ գործուածքների թելեր, որոնք
պոկւում են շորերից, վարագոյրներից և այլն,
հեշտութեամբ զանազանւում է գիւղական օդից,
որ ազատ է դրանցից: Քաղաքի փողոցների օդի
մէջ թէև նոյնպէս մասամբ գտնւում են գոր-
ծուածքների թելեր, բայց նրա մէջ էլ գերակըշ-
ուում են քարի և հողի մասնիկները, որոնցով ծած-
կուած են փողոցները: Գիւղական օդի մէջ աչքի
են ընկուում զանազան բուսական և կենդանական
մասնիկներ, որոնք պոկւում են բոյսերի և անա-
սունների վրայից: տերևի կամ փայտի կտորներ,
ծաղիկի սերմեր, անասունների մազերի և վերնա-
մաշկի կտորներ և այլն:

Բացի անգործ (inerte) մարմիններից մըթ-
նոլորտի օդի մէջ գտնւում են և գործարանաւոր
մարմիններ (organisé). Ծաղիկների փոշի ու սեր-
մեր և սունկերի սերմեր կամ սպորներ:

Ծաղկափոշինները որոշ տեսակ բոյսերի արա-
կան գործարանների արտադրութիւններն են և ծա-
ռայում են բոյսերի իգական սերմերի բեղմնաւո-
րութեան համար: Դրանք շատ տարածուած են
լինում գարնանը և ամառը, երբ նրանց թիւը մի
խորանարդ մետր օդի մէջ համուռմ է երբեմն
10,000: Աշնանը և մասնաւանդ ձմեռը նրանց թիւ-

ւը շատ պակասում է: Փակուած օդը պարունա-
կում է աւելի քիչ ծաղկափոշի, քան ազատ օդը:
Շատ բոյսերի սերմեր այնքան մանր են, որ
իրանց մեծութեամբ ծաղկափոշուց չեն տարբեր-
ւում: Այդ տեսակ բոյսերը սերմերը միաբջիջ են
և կոչում են սպօր: Այդպէս են, օրինակ՝ բոր-
բոս սունկի սպօրները, որոնք մանրագիտական
բշտիկներ են. ընկնելով թաց տեղ, այդ սպօրնե-
րը սկսում են թելեր արձակել ու երկարել: Այդ
թելերը, որոնք հիփ (hypthes) անունն են կրում,
ունեն զարմանալի յատկութիւն՝ ներս մտնել այն
մարմինների մէջ, որոնց վրայ սունկերը ապրում
են պարագիտի պէս: Նրանք կարող են մտնել ա-
տամների ոսկորների մէջ էլ: Այդ թելերի մէջ են
գոյանում բորբոսի սպօրները, որոնք դուրս պըրծ-
նելով իրանց մայրական մարմնից ցըւում են օդի
մէջ և գարձեալ ընկնելով նպաստաւոր պայման-
ների մէջ, ծլում են ու «բորբոսով» ծածկում,
օրինակ հացը, պանիրը, իւղը և այլն:

Կան այնպիսի սունկեր, որոնք յայտնի են
իրեւ զանազան խմորումների գործօններ, բայց
սենք ուղղակի. Կ'անցնենք այն տեսակներին, ո-
րոնք ապրում են բոյսերի և անասունների վրայ
և առաջացնում են նրանց մէջ զանազան հիւան-
դութիւններ:

Uredo մի սունկ է, որ աճում է ցորենի
վրայ Peronospora infestans, կամ գետ-
նախնձորի հիւանդութեան սունկեր, զարգանում
են չափազանց խոնաւութիւնից և երևում են

գետնախնձորի տերևների և արմատի վրայ։ Դրա ուրիշ տեսակներն էլ պատահում են բանջարեղենների և որթերի վրայ։

Aspergillus niger, սև բորբոսը յաճախ պատահում է մրգեղինների և հացի վրայ։

Oidium, խաղողի թող, կամ չոռ, բաւականին տարածուած խաղողի հիւանդութիւն է, որ շատ արագ փչացնում է այդիները։

Actinomyces bovis (ակտինոմիկօզъ), յաճախ լինում է եղների կամ կովերի վրայ և առաջացնում է ուռույցներ նրանց ծնուաների վրայ։ Այդ հիւանդութիւնը երբեմն պատահում է և մարդկանց մօտ և առաջացնում է թարախակոյտեր մարմնի զանազան մասերում։

Saccharomyces oblicans, կամ օւծium lactis, սպիտակագոյն սունկ է, որ յաճախ աճում է երեխաների բերանում, յեզուի վրայ, կամ երկարատև հիւանդութիւնից թուլացած մարդկանց բերանում։

Բնութեան մէջ շատ տարածուած են նաև բազմատեսակ միաբջիջ սունկեր, որոնք կոչում են մի կրոռներ (մանրուկներ)։

Սպիրով կենդանիների մէջ, միկրոբները արտադրում են իրանց ապրած միջնութագրի մէջ զանազան թորուեր, որոնք էնզիմ ընդհանուր անունն են կրում։ Եթէ այդ թոյնը արտադրուած է մեռած մարմնի մէջ, նա կոչում է պտույխին, իսկ եթէ կենդանի մարմնի մէջ՝ լիլումային։ Շատ հետաքրքրական է որոշել թէ ինչն իսկապէս հի-

ւանդութեան պատճառը, ինքը միկրոբը, թէ՞ նրա արտադրած թոյնը։ Դրանք հարցեր են, որոնց մասին դեռ բժշկական գիտութիւնը իր վերջնաշկան խօսքը չէ ասել, թէկ այժմ հէնց շատ գիտնական կողմից ընդունում է, որ հիւանդութիւնների պատճառը միկրոբների արտադրած թոյններն են և ոչ իրանք միկրոբները։

Պաստէօրն էր առաջինը, որ ակներև կերպով ապացուցեց թէ միկրոբներն էլ իրանք իրանց չեն ապացուցեց, այլ գոյութիւն են ստանում իրանց նըմաններից։ Այդ նա ապացուցեց մի շատ պարզ փորձով։

Նա վերցնում էր ջուր կամ բուլիօն մի ապակեայ նեղաբերան ամանի մէջ և եփ տալով մեռցնում էր նեղուկի մէջ եղած բոլոր մանրուկները և սպօրները։ Յետոյ կրակի վրայ փափկացները ամանի բերանը փակում էր նրան, կամ ծածկում էր մաքուր բամբակով, որ իր մէջ էր պահում օղի փոշին։ Այդպիսի նեղուկի մէջ ինչպահում օղի փոշին։ Եթէպիս նեղուկի մէջ ինչպահում օղի փոշին։ Եթէպիս նեղուկի մէջ, որ քանակական մարմին չէր գոյանում։ Բայց հէնց որ բանանք այդ ամանների բերանները և թողնենք, որ չը զտած օղը ապատ ներս մանի նեղուկի մէջ, մի կարծ ժամանակից յետոյ կը տեսնենք որ այդ նեղուկի մէջ զարգանում են մանչուկներ։ Նեղուկը նեխուում է, թթւում և այն։

Պաստէօրի այս փորձերից պարզուեց, որ այնպիսի երեսյթներ, ինչպէս փտելը, խմորումը և նեխուումը՝ միկրոբների գործունէութեան հետեւ

ւանք են և առանց նրանց ներկայութեան այդ երեսի մեջ տեղի չեն ունենում:

Մի քիչ յետոյ անզիմացի ֆիզիկոս Տիմոֆալը ևս ապացուցեց, որ մթնոլորտային օդը, գոնէ նրա ներքեխ շերտերը, լիքն են միկրոբներով և սունկերի սպօրներով:

Յայտնի է, որ արևի ճառագալթները, մըտնելով փոքրիկ ծակով մութ սենեակի մէջ, մեր աջերին մատչելի են դառնում փոշու ներկայութեան շնորհիւ: Եթէ սենք ճրագը մօտեցնելով այլենք մի փոքրիկ կտոր այդ լուսաւորուած շերտից, նրա տեղում կը մնայ մութ տարածութիւն: Իսկ փոշու ամեն սի մասնիկը, ինչպէս ապացուցեց Տիմոֆալը, ներկայացնում է միկրոբների ամբողջ մի բնակութիւն, «մի նաւ, որ բեռնաւորուած է միկրոբներով»: Բաւական է փոշու մի այդպիսի մասնիկ գցել նրա աճման հատար նպաստաւոր սիջաւալայրի մէջ, որ այդ վերջինը ծածկուի անթիւ մանրուկներով:

Մանրագիտակի տակ զննելով մթնոլորտային օդի միկրոբները, կարելի է տեսնել, որ նրանք շատ նման են ջրի և հողի մէջ գանուող միկրոբներին:

Սյս անթիւ էակները լիքն են բնութեան մէջ և իրանց ձևի կողմից կարող են բաժանուել երեք գլխաւոր դասակարգի:

1. Միկրոկոկիներ, փոքրիկ գնդակաձև բըշիջներ են, որոնք բազմանում են կիսուելով: Այդ բաժանման ժամանակ բըշիջը մի քիչ երկարում է,

յետոյ մէջտեղում նրա շուրջը երեսում է մի գոտի, որ հետզհետէ խրուելով բջիջի մարմնի մէջ, բաժանում է նրան երկու մասի: Վերջիններս իրանց կողմից նոյն ձեռվ բաժանում են կրկն երկումի և այլն:

Հիւանդութիւնները առաջացնող միկրոկոկիների մէջ կարելի է յիշատակել. ծննդական ջերմի միկրոկոկիներին, կարմիր քամու (րօյա) սարեպտոկոկիների, ոսկեգոյն և սպիտակ սարեպտոկոկիները, որոնք թարախի սովորական գործօններն են:

Խմորում առաջացնող միկրոկոկիների մէջ յիշատակենք. կաթի խմորիչը, միզատարի խմորիչը և քայցախի խմորիչը:

Բակտերի կոչւում է մանրուկների մի տեսակը, որ ամեն կողմից միկրոկոկին նմանելով, սակայն տարբերում է վերջինից նրանով, որ մի քիչ երկարաձև է և շարժում է շատ արագ: Միկրոկոկի շարժուելը աւելի նման է երերումի (vibration):

2. Բացիլիները ցուպիկների նման մանր էակներ են, նրանց երկարութիւնը 3—4 անգամ հաստութիւնից աւել է. Նրանց աճումը լինում է երկու տեսակ. կամ բաժանման ձևով, ինչպէս վերև է նկարագրած, կամ սպօրների (սերմերի) ձևով:

Բացիլիների մեծ մասը յատուկիեր են խաղում բնութեան մէջ: Մի մասը ընդունակ է խմորում կամ փուռման առաջացնել, միւս մասը զանազան հիւանդութիւնների պատճառ է դառ-

նուև: Վերջիններիս մէջ յիշատակենք բարակացաւի (Տյուբերկուլեզն) բացիլը. որ գաել է գերմանացի յայտնի գիտնական կոխը: Այդ բացիլները մեծ քանակութեամբ գտնւում են բարակացաւով հիւանդների խուխի մէջ: Խուխը բացիլների հետ չորանալով փոշի է դառնում և խառնուելով թողի հետ տարածւում է ամեն տեղ և նոր վարակումների պատճառ լինում: Շատ հասկանալի է ուրեմն, թէ ինչ մեծ նշանակութիւն ունի ընդհանուր առողջապահութեան տեսակէտից բարակացաւով հիւանդների խուխը առանձին հաւաքել և ախտահանել: Մի քանի երկրներում արգէն այդ նպատակով որոշ կարգադրութիւններ են եղել կառավարութեան կողմից: Այդ կարգադրութիւնների զօրութեամբ արգելում է հասարակական տեղերում և փողոցներում գետնի վրայ թքելը:

Bacillus mallei (сапньяя бациллы) ձիաների և էշերի մի յայտնի հիւանդութեան միկրոբներ են, որոնք շատ վասնգաւոր են և մարդու համար, որովհետև այդ կենդանիներից կարող են վարակուել և մարդիկ: Այդ հիւանդութիւնը բակում է հարբուխի նման:

3. Վիբրիօնները և սպիրիլլները ուրած թելիկի նմանութիւն ունեն: Մթնոլորտի մէջ չը կան այդ տեսակ միկրոբներ:

Ի վերջոյ նկատենք որ բազմաթիւ հետազոտութիւններ, որ կատարուել են մթնոլորտի օդի վերաբերեալ, բերել են հետեւեալ եղրակացութիւններին:

Տարուայ եղանակներից ձսեռը բակտերեաներ օդի մէջ ամենաքիչն է լինում, յետոյ նրանց թիւը աւելանում է գարնանը, ամառը լինում է աւելի շատ, իսկ աշնան վերջերում նրանց թիւը կրկնն սկսում է պակասել:

Տաք եղանակը նպաստաւոր է սաղմերի զարգանալու համար: Բայց բացի տաքից կան և ուղիւ օդերևոյթային պատճառներ, որոնք նսեմացնում են կամ, ընդհակառակը՝ աւելացնում են տաքի ազդեցութիւնը: Այսպէս, օրինակ, երկարատև անձրկից յետոյ օդի մէջ միկրոբները համարեա բոլորովին անհետանում են: Մինչդեռ երկարատև չորային եղանակից յետոյ նրանք շատ բազմանում են:

Եթէ քամին դալիս է մաքուր տեղերից, օրինակ ծովից, միկրոբների թիւը պակասում է, և ընդհակառակը քամին անցնելով անմաքուր տեղերով, իր հետ կարող է բերել բազմաթիւ միկրոբներ:

Քաղաքում օդի մէջ գտնուող միկրոբների մեծ մասը պատկանում է սիկլոռկոկիների տեսակին, յետոյ բացիլների տեսակին, իսկ ամենավերջին տեղը բանում են վիբրիօնները, որոնց թիւը շատ աննշան է օդի մէջ:

Բարձր սարերի օդը համարեա բոլորովին աղատ է միկրոբներից: Նոյնպէս և ծովի օդը:

Բայց այդպէս չէ քաղաքների օդը, ուր աղբում են այնքան մարդիկ և ներշնչում իրանց մէջ օդի հետ և այդ մանր արարածներին:

Օդը և ջուրը շատ գիտնականների կողմից
նկատում են իբրև տարափոխիկ և համաձարակ
հիւանդութիւնների տարածողներ։ Այժմ բոլորով
վին ապացուցուած է որ խոլերան և տիֆը տա-
րածում են ջրի հոսանքով։ Օդը տարածում է
կարսիր քամու, բարակացաւի, փտատենդի (սեպտի-
ցեմիա) և այլ սպօրները։

Շատ ցանկալի է, ի հարկէ, որ բազմանան
քաղաքներում և գիւղերում առողջապահական մի-
ջոցներ, որոնցով միայն կարելի է իջեցնել օրէ-
ցօր աւելացող միկրոբների թիւը օդի մէջ և բազ-
մաթիւ հիւանդութիւնների առաջն առնել։

Ստորի բերած վիճակազրական թուերը ցոյց
են տալիս թէ ինչպէս Պարիզի կենարոններում
տարէց տարի աւելանում է միկրոբների թիւը,
որ հաւանականաբար կախուած է բնակութեան խը-
տութիւնից։ Մինչդեռ միևնույն ժամանակ Պարիզի
Montsouris պարկում նրանց թիւը աստիճանուա-
բար պակասել է։ Վերջինիս պատճառն է բուսա-
կանութեան շատութիւնը, գործարանների բացա-
կայութիւնը այն տեղերում և առնասարակ մաք-
րութիւնը։

Մի խորանարդ մետր օդի մէջ եղել է.

Թիւ.	Պարկ.	Montsouris.	Պարիզի կենարոնում.
1885	—	480	3480
1885	—	450	3910
1886	—	428	3975
1887	—	390	3800
1888	—	365	4290
1889	»	4520	

Թիւ.	Պարկ.	Montsouris.	Պարիզի կենարոնում.
1890	—	345	4790
1891	—	300	5100
1892	—	290	5430
1893	—	275	6040

Այժմ տեսնենք թէ ինչ միջոցներ է գործա-
դրում առողջապահական գիտութիւնը մանրուկ-
ների սաղմերը՝ թէ օդի մէջ և թէ բնակարան-
ների փոշու մէջ ոչնչացնելու համար։

Փողոցների փոշին պակասացնելու միակ մի-
ջոցը՝ փողոցները միշտ ջրել ու սրբելն է, ինչ
վերաբերում է բնակարաններին, պէտք է այնաեղ
աւելի փոխարէն գործ ածել թեթև կերպով թրը-
ջած շոր և գրանով սրբել սենեկալների յատակը,
պատերը, խոկ առաստաղները լուանալ ջրով, կամ
ախտահան հեղուկով։ Նա մանաւանդ անհրաժեշտ
է այդ անել, եթե տարափոխիկ հիւանդութիւն է
երևացել բնակարանում։ Այս դէպքում կարևոր է
նաև շորերը (վարագոյներ, խալիներ, անկողին
և այլն) ախտահանել, կամ նրանց ենթարկելով
շոգու ազդեցութեան և կամ, որ աւելի հեշտ է՝
մի երկու շաբաթ փոելով դուրսը, թողնել այն-
տեղ արևի տակ։ Ինչպէս յայտնի է, արևի ճա-
ռագալթները նոյնպէս սպանիչ ազդեցութիւն ու-
նեն միկրոբների և նրանց սաղմերի վրայ։

Բնակարանների ախտահանութիւնը մի վե-
րին աստիճանի մանրակրկիտ գործ է։ Ախտահան
միջոցներից ամենալաւը սուլեման է՝ ջրի մէջ
լուծուած, 1 կամ 2 մասին 1000 մաս ջուր։ Ե-

թէ այդ խառնուրդին աւելացնում մի քիչ հասարակ աղ, նրա ազգեցութիւնը աւելի կը գօրեղանայ: Այդ հեղուկով հարկաւոր է լուանալ. պատերը, առաստաղները, կարասիքը, մահճակալները և այն, խկմնացած տեղերը՝ ողողել ցնցուղով (պուլյարիզատոր): Երծաթէ իրերը սուլեմայից փշանում են:

Սակայն կամ գէպքեր, երբ չի կարելի գործ ածել հեղուկ ախտահամները, այլ հարկաւոր է գործադրել գաղալին միջոցներ: Այդ նպատակի համար գործադրում են գեղեր (ծծումբ, խլոր, աւշակ), կամ հոտաւէտ բաղադրութիւններ, ինչպէս սկիպիգար, անուշահոտ ծաղիկների հիւթեր (essence) և այն: Բայց վերջիններիս գործադրութիւնը շատ սահմանափակ է թանգութեան պատճառով: Խունկի գործադրութիւնն էլ մեր առօրեայ կեանքում վաղուց ի վեր երեկի հիմունած է նրա ախտահան ազգեցութեան վրայ:

Իբրև շատ գօրեղ և նպատակայարմար ախտահան միջոց կարելի խորհուրդ տալ ամեն գէպքում ֆօրմալինը: Դա մի հեղուկ է, որ զանազան միջոցներով գոլորշի է դարձնում և այդ կերպով տարածուելով սենեակի ամեն ծակուծուկերը, հեշտութեմբ ոչնչացնում է միկրոները և նրանց սաղմերը: Դրա ամենամեծ առաւելութիւնից մէկն էլ այն է, որ շորեր չեւ փշացնում և առանձին պատրաստութիւններ չեւ պահանջում: Սենեակում ամեն բան կորող է մնալ իր տեղում, միայն հարկաւոր է պինդ կողպել բո-

լոր լուսամուտները, գոների ձեղքերը և բանալ բոլոր շորերի պահեստները, որ այն տեղերն էլ մուտք գործի ֆօրմալինի գոլորշին:

Ֆօրմալինը գոլորշի դարձնելու համար առաջարկուած են մի քանի գործիքներ, որոնց նկարագրութիւնը այստեղ մենք աւելորդ ենք համարում:

Վերջին ժամանակներս առաջարկուած է շատ հեշտ միջոց՝ ֆօրմալինը գոլորշի դարձնելու համար. Փօրմալինը ածում են մի այնպիսի ամանի մէջ, որտեղից նա կարողանայ հոսել միայն կաթ-կաթ և յարմարացնում են այնպէս որ այդ կաթիները ընկնեն անշէջ կրի վրայ: Այդ գէպքում ֆօրմալինը իսկոյն գոլորշիանում է և տարածուելով օդի մէջ ախտահանող ազգեցութիւն է անում:



յանու և զարգած պահաք պահանջանու զա
քամութեան օրու ու պահանջանու պահաք զար
գանութեան աշխատավոր համար զաման
աւան զաման աշխատավոր համար պահանջան
ափ զաման պահանջան համար աշխատավ
ուան զաման պահանջան համար պահանջան

3 աւանութեան պահանջան աշխատավ
աշխատավ պահաք պահանջան ու զաման զաման
զաման պահանջան աւան պահանջան պահանջան
զաման զաման պահանջան ու զաման աւան զաման
զաման զաման պահանջան աւան զաման զաման
զաման զաման պահանջան աւան զաման զաման

աւան 3

67
Տ. Ա. Յ. Ա.
Տ. Ա. Յ. Ա.

«Ազգային գրադարան»



NL0266660

13531